



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



BB 2001

LIBRARY

2010

Գ.

ԱԿ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔ


## ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԵԱՆ

Գ Ր Ե Ց

### Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ո Ւ Ն Ճ Ե Ա Ն

ԱՐԺԱՆԱՑԱԾ ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ  
ՎԿԱՑԱԿԱՆԻ ՎԵՆԵՏԿՈՑ ՄՈՒՐԱՏ – ՌՈՓԱՑԷԼԵԱՆ  
ՎԱՐԺԱՐԱՆԷՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի Վ Ա Ն Ս Ս Ղ Ա Ջ Ա Ր Ո Ւ

1902

7429

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԳՐԱՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

1957

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳԱՍԸՆԹԱՅԻՆ ԿԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԳՐԱՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆ

75-2057

1957

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1957

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳԱՍԸՆԹԱՅԻՆ

PRINCIPES GÉNÉRAUX DE DROIT

---

TROISIÈME PARTIE

---

COURS DE DROIT INTERNATIONAL

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն (\*)

Իրաւագէտ չ'եմ եւ ոչ ալ վարդապետ մը իրաւագիտութեան, այլ պարզ amateur մը այդ գիտութեան որոյ ընդհանուր սկզբունքներուն ծանօթանալ այնքան նպաստած է մտաւորական զարգացմանս :

Փափաքելով իրաւագիտութեան համար ունեցած սէրէս բաժին մըն ալ հանել Ազգիս եւ նա մանաւանդ տեսնելով մեր մէջ գրեթէ կատարեալ բացակայութիւն մը ներկայ գրուածիս տեսակէն աշխատութիւններու, համարձակութիւն առի գրելու ներկայ գիրքը հետեւելով բազմամիտ ղասատուիս Փրօֆէսօր Էտ. Մարքօնի դասախօսութիւններուն :

Անշուշտ լուրջ մտքի գործ չ'է կարծեն որ աշխատասիրութիւնս կատարեալ գործ մըն ըլլայ. սակայն եթէ ոչ-կատարեալ գոնէ սա առաւելութիւնն ունի՝ որ կրնայ իբր ուրուագիծ ծառայել ապագային ամեն անոնց՝ որը ձեռնհասութիւն ունենալով իրաւագիտական ուսման մէջ՝ կամենան աւելի կատարեալ երկասիրութիւն մըն ընծայել Ազգին :

*Յարութիւն Ունճեան*

*Նախկին շրջանաւարտ Վենետիոյ*

*Մուրատ - Ռափայէլեան*

*Վարժարանին*

*Կոստանդնուպօլիս,*

8/20 Մարտ 1899

(\*) Ա. Մասին յառաջբանն է զոր հաս եւս կ'արտատար պենք :

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԻԱԳԻՏՈՒԹԻՒՆ

## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

Ինչպէս որ տեսանք մեր աշխատասիրութեանը Երկրորդ մասին մէջ՝ Դրական Իրաւագիտութիւնը երկու բաժանումներ ունի, Ա. Մասնաւոր Իրաւագիտութիւն և Բ. Հանրային Իրաւագիտութիւն, և նոյնպէս տեսանք որ Առաջնոյն ստորաբաժնումներն են՝ Քաղաքային Իրաւագիտութիւն, Վաճառականական Իրաւագիտութիւն և Դատաւարութեան Իրաւագիտութիւն. և Երկրորդինն ալ՝ այսինքն Հանրային Իրաւագիտութեանն ալ ստորաբաժանումները են՝ 1. Ներքին Իրաւագիտութիւն որ կ'ընդգրկէ Քաղաքական Իրաւագիտութիւն, Վարչական Իրաւագիտութիւն և Պատժական Իրաւագիտութիւն եւ Բ. Արտաքին կամ Ազգաց-Իրաւագիտութիւն:

Փոխանակ այս բաժանումներուն առաջինէն սկսելու, կարգ մը անձնական նկատողութիւններու հետեանօք, պիտի սկսինք խօսիլ ամենէն վերջինէն, այսինքն թէ Ազգաց կամ Միջազգային Իրաւագիտութիւնը՝ նիւթը պիտի կազմէ մեր աշխատութեանը այս Երրորդ Մասին:

Ուրեմն, ինչպէս որ ըսած ենք արդէն այդ բաժանումները զծած ատեննիս, Ազգաց կամ Միջազգային Իրաւագիտութիւնը (Droit des gens ou International) ամբողջութիւնն է այն կանոններուն՝ որք ըլլայ խաղաղութեան պահուն, ըլլայ պատերազմի ատեն՝ կ'որոշեն



քաղաքական ընկերակցութեանց միջև եղած փոփոխակի իրաւունքներն ու պարտքերը:

Քանի մը իրաւագէտներ զՄիջազգային իրաւագիտութիւնը չ'են նկատեր իբր ստորաբաժանում մը Հանրային իրաւագիտութեան: Եւ յաիշտակուած սա գիտողութեանն որ Իրական իրաւագիտութիւնը՝ որոյ բաժանումներէն մին է Հանրային իրաւագիտութիւնը՝ վաւերացում մը (Sanction) ունի և թէ Ազգաց-իրաւագիտութիւնը զուրկ է այդ վաւերացումէն, յիշեալ իրաւագէտները զՄիջազգային իրաւագիտութիւնը կը միացնեն բնական իրաւագիտութեան: « Բնական օրէնքը, կըսէ ասոնցմէ մէկը<sup>1</sup>, երբ պատուիրէ ամեն մարդոց յատուկ ուղղութեան կանոններ զայնս նկատելով անհատարար, այն ատեն իրեն Բնութեան օրէնքի կամ իրաւունքի անուրը կուտան. և երբ վարէ ազգ կոչուած հաւաքական էակներու գործերը. այս պարագային մէջ զայնս կ'անուանեն Ազգաց-իրաւունք կամ Միջազգային Հանրային իրաւունք: Ինչպէս որ աղգերու մէջ Աստուծմէ զատ հասարակաց վերակեցում մը չիկայ ատկէ կը հեռուի որ իրենց յարաբերութիւնները ենթարկուած կը մնան այն բնական իրաւունքին որ քանդակուած է ամեն մարդոց սրտին մէջ: Դայնսագրութիւններն իսկ որք կը վարեն այդ յարաբերութիւնները ինչ ինչ պարագաներու մէջ, երաշխաւորեալ չ'ըլլալով և ոչ մի մարդկային իշխանութենէ, կը մնան լոկ բնական պարտականութեան վիճակին մէջ, և իրենց ստիպողական զօրութիւնը կ'առնուն միայն արդարութեան այն զգացումէն որ կը մղէ զմարդիկ բռնելու իրենց յանձնառութիւնները երբ ողբ հեռացած չ'են երբէք այս յանձնառութիւններէն՝ ստիպողական շահու մը կամ իրենց կրքերուն բերմամբ »:

Համամայեցոյց Jus gentium այսինքն Ազգաց իրաւունքը. — Ազգաց իրաւունքի անունը ծանօթ էր վաղեմի Ժողովրդոց. համամայեցիք կը խօսէին Jus gentium ի վրայ, Բայց իրենք այս բառերուն բոլորովին տարբեր նշանակութիւն մը կուտային: Իրենց համար Jus gentiumը ուրիշ բան չ'էր եթէ ոչ Մասնաւոր Ի-

րաւագիտութեան այն մասը որ կը բղխէր մարդոց սովորական յարաբերութիւններէն և որ կը գործածուէր թէ քաղաքացւոց և թէ օտարներու համար: Ահա այս պատճառաւ էր որ Հռովմայեցւոց վաճառումի վրայի օրէնքները ազգաց իրաւունքին վերաբերեալ օրէնքներ էին, որովհետեւ թէ օտարները և թէ քաղաքացիները կրնային զայնս օգնութեան կոչել Հռոմի մէջ. մինչդեռ խնամակալութիւններու (վասիլիք, tutelle) վրայի օրէնքները քաղաքային իրաւունքի (juris civilis) օրէնքներ կը կոչուէին, որովհետեւ ասոնք մի միայն հռոմէական քաղաքացիներու համար գործադրելի էին:

Միջազգային իրաւագիտութեան անունին ծագումը. — Ամենէն ասալ Zouch<sup>1</sup> եղաւ որ 1650ին յանձնարարեց Jus inter gentes, իրաւունք բնկ մէջ ազգաց, անուամբ կոչել ամբողջութիւնը այն կանոններուն որք կը կառավարին աղգերու միջև եղած յարաբերութիւնները:

Միջազգային իրաւագիտութեան անունն ալ (International Law) կը վերագրեն Bentham ի:

Կայ իբր ազգաց կամ Միջազգային իրաւունք մը. — Պատճառ կասկածելու: — Առաջին խնդիրը որ կը ներկայանայ գիտնայն է թէ կայ արդե՞օք իրոք Ազգաց կամ Միջազգային իրաւունք մը:

Ըստ իրաւագէտներու՝ ասոր վրայ կասկածելու պատճառ կուտայ սա պարագան որ չիկայ օրէնսգրական և դատաւորական հիմնական կանոն մը որոյ հեղինակութիւնը՝ ճանչցուած համայն աղգերէ՝ որոչէ այն իրա-

1. Zouch, Տեւալ 1590ին և վախճանեալ 1660ին, անունի անգլիացի իրաւագէտը, Օքսֆորտի Համալսարանին Հռոմէական իրաւագիտութեան ուսուցիչը, Վէսթֆալիայ հաշտութենէն եկու տարի վերջը հրատարակած է համառօտ երկ մը այն զիտութեան վրայ զոր կրօցիուսի (Grotius) գրութիւնները այնքան ժողովրդական ընծայած էին Եւրոպիայ պետական անձնաւորութեանց և զիտոց: Իւր այդ գրքիկին ախաղսն էր՝ Juris et judicii feacialis, sive juris inter gentes et quæstionum de eodem explicatio.

ունքը որ պարտի կանոնաւորել այս ազգերուն իրարու մէջ եղած հաղորդակցութիւններն ու յարաբերութիւնները: Ապաքէն մէն մի Պետութեան մէջ կայ միշտ օրէնագիր իշխանութիւն մը որ կը կազմէ յատկապէս այդ Պետութեան քաղաքային իրաւունքը, և նոյնպէս դատական իշխանութիւն մը որ կը մեկնէ այս իրաւունքը և կը գործադրէ զայն յատուկ յատուկ պարագաներու: Քայց ազգերու հաւաքական ամբողջութեանը մէջ օրէնագրական իշխանութիւն չիկայ. հետեւաբար չի կան բացորոշ օրէնքներ, ի բաց առեալ անոնցմէ որք առաջ կուզան ազգերուն իրարու մէջ կնքած պայմանագրութիւններէն: «Քանի որ ազգերը վերակացու մը չունին, քանի որ կազմած չ'են իրենց մէջ և իրենց վրայ և ոչ մի հասարակաց հեղինակութիւն որ սահմանուած ըլլայ կազմաւորելու յատկապէս Միջազգային իրաւունքը, եւ քանի որ՝ վերջապէս՝ ազգերը հաստատած չ'են տեսակ մը համազգային իշխանութիւն մեկնելու և գործադրելու համար այս իրաւունքը, անկարելի է որ գոյութիւն ունեկայ դատաւորական մեկնութիւններով պարզուած Միջազգային իրաւունք մը:

Սակայն կըսեն որ այդ աւարկութիւնը կարող չ'է արգիլելու շատ իրական Ազգաց կամ Միջազգային իրաւունքի մը գոյութեանը հաւատալը: Ապաքէն, պէտք է զանազանել կըսեն, իրաւունքը՝ իրաւունքին երաշխաւորներէն: Իրաւունք մը կրնայ զուրկ ըլլալ երաշխաւորութենէ, բայց ասիկայ չարգելու որ այդ իրաւունքը գոյութիւն ունենայ: «Իրաւունքը իրեն հետ միշտ չի վերցնէր վաւերացումը որ կը պաշտպանէ զայն և հարկարելի կը կայուցանէ ազգու կերպով մը. այս ասիպողական իրաւունքին քով կայ ազատ իրաւունք մը զոր անհատը իսկ պարտին պաշտպանել՝ կանգուն պահելու համար զայն իրենց մէջ: Միջազգային իրաւունքը, իր առաջնակարգ հանգամանքովը, այս վերջին դասին կը վերաբերի: Մէն մի Տէրութիւն կըսի ինքնիրեն դնել իւր միւս Տէրութեանց հետ ունեցած յարաբերութիւններուն օրէնքը: Այն ինչ զուրս կ'եղնէ մեկուսացումէ, իր ուրիշներու հետ ունեցած հաղորդակցութեանը մէջ իրեն հասարակաց օրէնք մը կը հաստատէ, որմէ ոչ որ կրնայ խոյս տալ, առանց հրաժարելու միւսոյն ատեն,

կամ առ նուազն առանց վնաս հասցնելու իւր անհատական գոյութեանը և այլոց հետ իր ունեցած յարաբերութեանցը: Այդ օրէնքը կը քաշուի կամ կը լայննայ ազգերու մշակմանը աստիճանին համեմատութեամբ...: Տէրութեանց ընկերակցութեան մը՝ ըլլայ յայտնորոշ՝ ըլլայ լուեխայն՝ կամ կարծեցեալ ընդհանուր մէկ հաւանութեանը վրայ հիմնուած այդ օրէնքը իւր գոյութիւնը կ'առնու հասարակաց այն համոզումէն զոր ընկերակցութեան իւրաքանչիւր անդամը, նոյնանըման պարագաներուն մէջ, պիտի զգայ նոյնպէս և ոչ թէ ուրիշ կերպով գործելու պէտքը, ըլլայ նիւթական, ըլլայ բարոյական պատճառներու բերմամբ »:

Այսու հանգերձ միջազգայն օրէնքը ամբողջովին զուրկ չ'է վաւերացումէ: Պատերազմին սոսկալի վաւերացումէն զատ, միջազգային օրէնքը պաշտպանուած է բարոյական հանգամանք ունեցող վաւերացումէ մը: Հասարակաց կարծիքը՝ որ անոր իբր գործիք և վարիչ կը ծառայէ՝ կը հալածէ անոր դէմ գործուած բռնաբարութիւնները իր վերաքննութիւն չի վերցնող վճիռներովը:

Կա՞յ տիեզերական, ամեն ազգերու կողմէն ձևակցուած Ազգաց-իրաւունք մը. — Եթէ Ազգաց կամ Միջազգային իրաւունքը կայ, եթէ ատիկայ լոկ ցնորական յղացում մը չ'է երբէք, եթէ հաստատուած կան ժողովրդոց միջև ինչ ինչ սովորութիւններ, ինչ ինչ կանոններ որք կը կազմեն, այսպէս ըսած ըլլալու համար, Ազգաց իրաւունքին իրաւագիտութիւնը, այսու հանդերձ կը խոստովանին որ չիկայ Ազգաց դրական իրաւունք մը, տիեզերական, ընդունուած աշխարհիս ամեն ժողովուրդներէն: Ուղղութեան կանոններուն այն ամբողջութիւնը զորս հաստատած են ազգերը եւ վեհապետները իրենց փոխադարձ յարաբերութիւններուն մէջ, և զորս իրենց հարկադրելի ըրած են իրենց մէջ ընդհանրապէս ընդունուած կարծիքները, եւրոպական ժողովրդոց հասարակական ծագման մը և կրօնքի մը վրայ հիմնուած է կ'ըսեն:

Միջազգային իրաւունքը Եւրոպայ ծնած է. կատարեալ կերպով զարգացած է եւրոպեան աշխարհին քրիս-

տոնեայ ազգերուն քով. երկար ատեն սահմանուած մնացած է Եւրոպիոյ քաղաքակրթուած և քրիստոնեայ ժողովրդոց, եւրոպական ծագում ունեցող ժողովրդոց: Եւրոպիոյ և Ամերիկայի ոչ-քրիստոնեայ Պետութեանց հանդէպ և նոյնպէս Ասիոյ և Ափրիկէի հեթանոս և մահմէտական ժողովրդոց հանդէպ, այս իրաւունքին գործադրութիւնը բոլորովին ազատ մնացած էր, և հիմնուած պայմանադրական լոկ փոխադարձութեան մը վրայ: Ասոնց հետ յարաբերութիւնները կը կազմուէին քաղաքականութեան և բարոյականին պահանջումներուն համեմատ: Այս պատճառաւ Միջազգայն Իրաւունքը կը կոչէին Եւրոպական հանրային իրաւունք:

Բայց ԺԹ. դարուն մէջ այս իրաւունքը իւր յաղթանակները տարածեց աշխարհիս զանազան մասերուն վրայ: Հիւսիւսային Ամերիկայի Միացեալ-Նահանգները, Հարաւային Ամերիկայի շատ մը նահանգները, կը մասնակցին այսօրուան օրս Եւրոպական Ազգաց Իրաւունքին: Բարձրագոյն Դուռն ալ՝ 1856ին Բարիզի դաշնագրութեամբ՝ մտաւ Եւրոպիոյ հանրային իրաւունքին հաղորդութեանը մէջ: Դեսպանութեան (légation) իրաւունքները ճանչցուեցան Պարսկաստանի, Եգիպտոսի և Պէրսիայի հետ Սէրուքիւններու կողմանէ, և տարածուեցան փոխադարձաբար այս երկիրներուն մէջ Եւրոպիոյ քրիստոնեայ երկիրներէն: Արդէն շատ ատենէ ի վեր Օսմանեան մեծագոր կայսրութեան անկախութիւնն ու հողային ամբողջութիւնը եւրոպական պետութեանց հաւասարակշռութեանը էական տարրերէն մին նկատուած են և նիւթ եղած, տէրութիւններու միջև, համոզումներու՝ որք այժմ՝ մասն կը կազմեն՝ Եւրոպիոյ հանրային իրաւունքին: Մարթ է այս գիտողութիւնները ընել նաև շինական կայսրութեան և Եւրոպիոյ և Ամերիկայի քրիստոնեայ ազգերուն միջև ԺԹ. դարուն մէջ, կատարուած համաձայնութիւններուն, որով այս կայսրութիւնը հրաժարեցաւ իւր հակա-ընկերական և հակա-վաճառականական սկզբունքներէն, և ճանչցաւ միւս ժողովրդոց անկախութիւնն ու հաւասարութիւնը, խաղաղութեան և պատերազմի յարաբերութիւններու մէջ:

Եւրոպական հանրային իրաւունքին յատկուրիւնը. — Իւր իշխանութիւնը այդքան հեռուն տանող Եւրոպա-

կան հանրային իրաւունքը կը բաղկանայ պայմանադրական կանոններէ, որք արձանագրուած են հանրային դաշնագրերու մէջ, և կամ թէ ձանչցուած են ոչ-երկաւորի և անփոփոխ գործածութեան եւրոպական ազգերուն եւ իրենց կառավարութիւններուն կողմանէ, և կամ թէ կը բաղկանայ կանոններէ որք կրնան առաջ եկած ըլլալ այս ազգերուն հիմնական օրէնք ու կանոններէն, քաղաքակրթութեան աստիճանէն և բարքերէն:

Նշանաւոր է իւր մարդասիրական յատկութեամբը որով գերիվերութիւն կը ստանայ հին աշխարհին այդ Իրաւունքին վրայ: Այս վերջինը իւր հիմնունքն ու պատերազմը, մինչդեռ խաղաղութիւնն է նոր Իրաւունքին բնական վիճակը:

Իւր երաշխաւորութիւնը. — Պաշտպանուած է փառասէր զօրութեան հրապոյրներուն դէմ ազգերու կողմանէ քաղաքական հաւասարակշռութեամբ մը: Այս հաւասարակշռութիւնը կը կայանայ անհաւասար Տէրութիւններու ընկերակցութեան մը հաւաքական և բարոյական երաշխաւորութեանը մէջ, երաշխաւորութիւն որ նպատակ ունի ստիպելու իւր անդամները դէմ դնելու մինակ մէկու մը գերագունութեանը՝ ամենուն միացած զօրութեամբը:

Պզգաց կամ Միջազգային իրաւունքին Աղբիւրը. — Ընդհանրապէս կըսեն որ Ազգաց կամ Միջազգային Իրաւունքը վեց աղբիւր ունի՝

Ա. Զանազան Տէրութիւններու միջև հաշտութեան, նիդակակցութեան և վաճառականական դաշնադրութիւնները.

Բ. Բարձրագոյն Պետութեանց կողմանէ տրուած որբոշումները պատերազմի ատեն նաւագրութիւններ-կարգադրելու համար.

Գ. Միջազգային դատարաններու կողմանէ տրուած վճիռները.

Դ. Օրէնագէտներու կողմանէ գաղտնի կերպով (confidentiellement) իրենց կառավարութեանցը տուած կարծիքները:

Ե. Ազգաց ընկերութեանը գործադրելի արգարութեան կանոնները սորվեցնող իրաւագիրներու գրաւածները, և սովորութեան և ընդհանուր հաւանութեան համաձայն այս կանոններուն վրայ կատարուած փոփոխութիւնները:

Զ. Պատերազմներուն և միջազգային գործերու վերաբերեալ բանակցութիւններուն պատմութիւնը:

Ազգերու իրաւունքին իրր աղբիւր նկատուած դաշնադրութիւններուն առարկան. — Դաշնագրութիւնները Ազգաց Իրաւունքին ամենէն բեղմնաւոր աղբիւրը են. իրենց բնագիրը և իրենց ոգին վիայ են ազգերուն և կառավարութիւններուն համաձայնութեանը:

Ատնք կամ կը կրկնեն և կամ թէ կը հաստատեն Ազգաց-Իրաւունքին ընդհանուր կերպով ճանչցուած կանոնները:

Կամ բացառութիւններ կը շինեն այս Իրաւունքին, և մասնաւոր օրէնքներու պէս են կնքողներու միջև:

Եւ կամ թէ այս Իրաւունքին սկզբունքները կը բացատրեն, այնպիսի կէտերու վրայ որոց իմաստը մթին է կամ անորոշ: Այն ատեն առաւել կամ նուազ հեղինակութիւն կ'ունենան ըստ դաշնագիր տէրութեանց թուոյն կարեւորութեանը:

Վերջապէս որոնք կը կազմեն ազգերու կամաւոր իրաւունքը: Յայտնի է որ միւսոյն նիւթի մը վրայ դաշնագրութիւններու անդադար յաջորդութիւնը մը կրնայ նկատուիլ իրր այդ նիւթին վրայ ազգերուն կարծիքին արտայայտութիւնը:

Սակայն քիչ մը շրջաձայնցութիւն պէտք է բանեցնել այս աղբիւրին դիմուած ատեն, որովհետեւ դաշնագրութիւնները կը բռնեն միայն անոնք որք անոնց մասնակցած են, և ստուգելու ալ քիչ են այն դաշնագրութիւնները որոց մէջ ամեն կառավարութիւնները ներկայացուած ըլլան: Այս կարգի դաշնագրութեանց մէջ հազիւ կը համարձակին դասել Վէսթֆալիոյ դաշնագրութիւնը, Վեննայի Վեհաժողովին թուղթը, Վերջապէս 1856ին Փարիզի մէջ հաւաքուած Դեսպանաժողովին կողմանէ պարզուած ծովային-միջազգային կանոններու վերաբերեալ հաշակաւոր յայտարարութիւնը:

Պատերազմի առեկ նուազերու քիւնները կարգադրելու համար Բարձրագոյն պետութեանց կողմանէ տրուած յարաւանները՝ նկատուած իրր աղբիւր Ազգաց Իրաւունքին: — Իրաւագէտները կըսեն թէ կրնանք նկատել Տէրութեան մը ծովային գործոցը մասին տուած որոշումները ոչ միայն իրր պատմական վիայութիւններ այդ Տէրութեան ծովային պատերազմի գործողութիւններուն, այլ նաև իրր հաստատուել այդ Տէրութեան օրէնագէտներուն կողմանէ Ազգաց տնկերական Իրաւունքին իրր ընդհանուր կերպով համաձայն ճանչցուած կանոններուն վրայ յայտնուած կարծիքին:

Միջազգային դատարաններու վճիռները՝ նկատուած իրր աղբիւր Ազգաց-Իրաւունքին, — Միջազգային ատեաններու վճիռները կը ծառայեն հաստատելու ազգերու մէջ ընդհանուր կերպով ճանչցուած սկզբունքները, որք, հետեւաբար, պարտին դատուիլ Ազգաց-Իրաւունքին կանոններուն մէջ:

Քանի որ խնդիր է զիտնալ թէ որոնք են ամենէն աւելի ընդհանուր կերպով ճանչցուած սկզբունքները, պէտք է, հետեւաբար, աւելի շատ կարեւորութիւն ընծայել իսպառնքիքներու սրտումներուն, որք կը կազմուին երկու կամ բազում Պետութիւններ իրր իրաւաւոր իրարու մէջ, քան թէ ծովային ատեաններու վճիռներուն որոց դատարանները ընտրուած են մի միայն մեկ պետութեան մը կողմանէ:

Դաւով Ազգաց-Իրաւունքին միւս աղբիւրներուն՝ իրենց օգտակարութիւնը յայտնի է: Վէճի տակ ինկած կէտերու վրայ օրէնագէտներուն կողմանէ իրենց կառավարութեանցը ծածուկ կերպով գրուած և արուած կարծիքները սովորաբար իրաւունքին կանոնը և միջազգային գործողութիւնը կը պարզեն: Այն երկիրներու արտաքին գործոց պաշտօնատուներուն դիւանները լի են այդ սեսակ վաւերագրերով:

Իրաւագիրներու գրուածները տեսականորէն կը սորվեցնեն ազգաց ընկերութեանը գործադրելի արգարութեանը կանոնները, և այս կանոններուն վրայ ըստ սովորութեան և ընդհանուրին հաճութեան կատարուած փոփոխութիւնները: Իրենց վիայութեանը կարեւորու-

Թիւնը կ'աւելնայ ամեն անգամ որ իրենց հեղինակու-  
թիւնը կը խնդրուի պետական անձերու կողմանէ :

Վերջապէս պատերազմներու , բանակցութիւններու ,  
հաշտութեան , դաշնադրութիւններու և միջազգային գոր-  
ծոց վերաբերեալ դեռ ուրիշ գործառնութիւններու պատ-  
մութիւնը Տէրութիւններուն կողմանէ ընդհանուր կեր-  
պով ճանչցուած և գործադրուած սկզբունքներուն ու-  
սումնասիրութեանը լրացուցիչ անհրաժեշտ տարրն է :

Բաժանմունք Ազգաց-իրաւունքի՝ ներկատուած իրը  
նէշք ուշուշմնասիրութեան . — Նկատուած իրը նիւթ  
ուսումնասիրութեան՝ Ազգաց իրաւունքը կը բաժնուի  
Ազգաց բնական իրաւունքի և Ազգաց դրական իրա-  
ւունքի . Ազգաց հակերային իրաւունքի և Ազգաց մաս-  
նաւոր իրաւունքի :

Ազգաց-բնական-իրաւունք . — Ազգաց բնական-իրա-  
ւունքը կը կայանայ բնական իրաւունքին ազգերու  
գործադրութեանը մէջ : Իւր կանոններուն ազդիւրն է  
տիեզերական բանը : Անփոփոխելի է : Չայն կը կոչեն  
նաև ախնաիր՝ նախնական , բացարձակ , անհրաժեշտ ,  
տիեզերական , ներքին կամ իմաստասիրական :

Ազգաց-Դրական-իրաւունք . — Ազգաց-Դրական-ի-  
րաւունքը կը բղխի ազգերու շեշտայն կամ յայտնի  
կամքէն : Կը ստորաբաժնուի ուրեմն ազգաց-դրական-  
անգիր-իրաւունքի , և ազգաց-դրական-գրաւոր կամ պայ-  
մանադրական իրաւունքի : Ազգաց-դրական-անգիր-իրա-  
ւունքը կը հանգչի սովորութիւններու վրայ . ազգաց-դրա-  
կան-գրաւոր կամ պայմանադրական իրաւունքը կը հանգչի  
դաշնադրութիւններու , կամ միջազգային պայմանադրու-  
թիւններու վրայ :

Ազգաց-դրական-իրաւունքը կրնայ փոփոխել յան-  
հունս . զայն կ'անուանեն նաև՝ կամաւոր , գործնական ,  
արտաքին , երկրորդական կամ քրեմիւն :

Ազգաց-Հակերային-իրաւունքիւնք . — Ազգաց հան-  
րային իրաւագիտութիւնը ամբողջութիւնն է այն կա-  
նոններուն որք կ'որոշեն ազգէ ազդ եղած յարաբերու-  
թիւնները :

Ազգաց-Մասնաւոր-իրաւագիտութիւնք . — Ազգաց-  
Մասնաւոր-իրաւագիտութիւնք ամբողջութիւնն է այն  
կանոններուն որոցմով կը դատուին զանազան երկիրնե-  
րու քաղաքային կամ ոճրային օրէնքներուն միջև ծա-  
զած վեճերը :

Յետագայ յաւցակը կը պարզէ՝ Համատեսական կեր-  
պով մը՝ այդ տեսական բաժանումը՝

Ա. Ազգաց-իրաւունք

Բնական . . . . .

Դրական . . . . .

Որ կը կայանայ Բնա-  
կան իրաւունքին ազգե-  
րու համար գործադրու-  
թեանը մէջ . . . . .

Որ կը բղխի ազգերու  
քրեմիւն կամքէն . . . . .

Անփոփոխելի

Հակամապիս փոփո-  
խելի

Անգիր

( Coutumes )

(Որ կը կենայ սովորու-  
թիւններու վրայ)

Գրաւոր կամ

պայմանադրական

( Հիմնուած դաշնադրու-  
թիւններու վրայ )

Բ. Ազգաց-իրաւունք

Հանրային . . . . .

Մասնաւոր . . . . .

Ազգաց - Բնական - Իրաւունքի և դրական - Իրաւունքի բաժանմանը արդարացունքը. — Նշանաւոր քաղաքագէտ մը մեծ յստակութեամբ մը կ'արդարացնէ ազգաց - բնական - իրաւունքի և ազգաց - դրական - իրաւունքի բաժանումը: «Ամեն մարդ գիտէ, կըսէ, որ կան իրաւունքներ և պարտքեր որք կը բղխին յայտնի կերպով մարդուս բնութենէն, և ան որ քիչ շատ պարզ խելք ունի՝ չի կրնար զայն խնդրոյ նիւթ ընել: Այդ իրաւունքներուն և պարտքերուն ամբողջութենէն կը կազմուի Բնական Իրաւունք, Բնոչքեան Իրաւունք, Բակին Իրաւունք, Ինստատսիրական կամ տիեզերական Իրաւունք, և ասոնք ուրիշ բան չ'են՝ եթէ ոչ համարժէք բացարձակներն:

«Բնական հետեւութեամբ մը Ազգաց Ինստատսիրական կամ տիեզերական Իրաւունքի անունը տուած են իրաւունքներու և պարտքերու այն ամբողջութեանը զոր ազգերու շահերը կը պահանջեն յարգել մին միւսոյն հանդէպ:

«Յայց կը պատահի որ բանականութեան այս սկզբունքները մերթ կը ճանչցուին, մերթ խնդրոյ տակ կը ձգուին կառավարութիւններէն, այնպէս որ այն զոր մէկը կ'որոշուին իրր անվիճելի այն ինչ ժամանակամիջոցին մէջ, և կը պահանջէ ևս որ միւսներու կողմանէ ալ յարգուի, իրեն նկատմամբ, ուրանայ զայն վերջը և հրաժարի զայն գործադրելէ, երբ իր գործին այդպէս դայ:

«Ուրեմն պէտք զգացուեցաւ հաստատելու՝ յստակ և դրական պայմանադրութիւններու միջոցաւ՝ այս սկզբունքներուն մէկ քանին: Ապաքէն, ամեն ազգերը ասոնցմէ մէկ քանին արձանագրած են իրենց միւս ազգերու հետ կնքած դաշնագրերուն մէջ, և ահա այդ պայմանագրութիւններու ամբողջութիւնէն այն զոր կը կոչեն ազգաց - կաւուտը, դրական կամ այժմեայ - իրաւունքը:

«Այսու հանդերձ պէտք չ'է կարծել որ Տէրութեանց կողմանէ տարրեր ժամանակամիջոցներուն մէջ ընդունուած բոլոր սկզբունքներն ալ համաձայն գան առողջ բանին հետ: Ստէպ զօրութիւնը և խորամանկութիւնը անոնց տեղի տուած ըլլալով, զայնս ուրիշ բան պէտք չ'է նկա-

տել՝ եթէ ոչ պայմաններ, զորս վաստակող կողմը իրաւունք ունի մերժելու՝ քանի որ կարող է զայդ ընել առանց ենթարկելու տելի մեծ վտանգներու:»

Ազգաց - Դրական - Իրաւունքի մը գոյութեանը արդարացունքը. — Թէպէտև չի կան յայտնորչ պայմանագրութիւններ՝ հասարակ եւրոպիոյ բոլոր ազգերուն, սակայն մարթ է շինել, կըսեն, վերացումով, տեսութիւն մը այնու որ ամենէն աւելի ընդհանուր կերպով ի գործ կը դրուի Եւրոպական Տէրութիւններու միջև: Եւ, ապաքէն, Տէրութեանց բազմաթիւ ու մասնաւոր դաշնագրութիւնները շատ մը կէտերու մէջ այնպէս մը իրարու կը նմանին իրենց էական մասերուն մէջ որ մարթ է ասկէ վերացնել սկզբունքներ իբր ընդունուած ամեն անոնց միջև որք դաշնագրութիւններ կազմած են միւսոյն նիւթի մը վրայ:

Միւսոյն բանն է նաև իրարու հետ հաղորդակցութիւն կապող Տէրութեանց միջև հաստատուած մասնաւոր սովորութիւններուն մասին: Սովորութիւնները անգամ մը հաստատուելէ վերջը, մանաւանդ Եւրոպիոյ մեծ տէրութեանց շատերուն միջև, կ'ընդունուին իսկոյն, և նոյն իսկ դիւրաւ կ'որինակուին միւս Տէրութեանց կողմանէ, մանաւանդ միջին և փոքր Տէրութեանց կողմանէ: Ասկէ գատ, եւրոպական տէրութիւնները, ստէպ կոչումն ընելով քաղաքակրթուած ազգերու Ազգաց - անդեր - իրաւունքին, այս իրաւունքին կը վերադրեն զօրութիւն մը զոր կարելի չ'է վէճի տակ ձգել:

Գալով դաշնագրութիւններուն, ասոնք իսկ, թէպէտև կը կապին մի միայն դաշնագիր կողմերը, երբեմն իբր օրինակ կը ծառային միւս Տէրութեանց հետ կընքելիք միւսոյն տեսակ դաշնագրութիւններուն: Ասկէ կը հետևի դաշնագրութիւն կնքելու գործածական եղանակ մը: Վերջապէս, երբեմն ալ, բան մը որ կարգադրուած է դաշնագրութիւններով այս ինչ Տէրութեանց հետ, կը պահուի միւսներու հետ լսկ սովորութեան մը բերմամբ այնպէս որ միւսոյն կէտ մը կրնայ ոմանց համար ըլլալ պայմանագրական իրաւունքի վերաբերեալ կէտ մը, և ոմանց համար ալ անգիր իրաւունքի վերաբերեալ կէտ մը:

Նոր ժամանակաց նոր ձգտումներէն ծնած քաղաքական, տնտեսական և ընկերային եղերաբանները. — Եթէ 'ի նկատի առնուենք նոր ժամանակաց մէջ ժողովրդոց քաղաքական բարքերը, ընկերային վիճակը և միջազգային յարաբերութիւնները, կը տեսնենք՝ յառաջագիծեան ուղղութեամբ՝ շատ մը կարևոր եղելութիւններ:

Ա. Հրատարակութիւն (Publicité). — Այդ եղելութիւններուն առաջինն է հրատարակութիւնը որ այսօրուան օրս հասարակաց կարծիքին առջև կը պարզէ կառավարութեանց գործերը: «Այսօրուան օրս, կ'ըսէ Իրաւագիր մը, սնահաստալի հրատարակութիւն մը կը լուսաւորէ դաշխիճներուն ամեն արարքը, սնդագար վիճարանութիւն մը վայրկենապէս կը փոխէ անոնց տեսութիւնները. ժողովուրդները, իրենց սպառնացող վշտանգներուն աւելի լաւ տեղեակ, աւելի 'ի վիճակի են ատոնց դէմ ինքզինքնին պաշտպանելու, և երբ տիեզերական անդորրութեան վրայովիչ մը կ'ենէ մէջտեղ, ու մանց զօրեղ գիմադրութիւնը, ումանց ալ սպառնալիք չէզոքութիւնը, կրկին արգիւնքը կունենայ շարքը անոր դէմ դարձնելու, և կարծելու թշնամութեանց տեսութիւնը:

Բ. Տնտեսական եղերաբանաց տրուած կարևարութիւնը. — Երկրորդ գործը տնտեսական եղելութեանց տրուած կարևորութիւնն է: Պէտքերու բազմապատկութիւնը՝ արգասիք յառաջացնել քաղաքակրթութեան մը՝ գտնել տուաւ դայնս գոհացնելու յատուկ նորանոր միջոցներ, և հարկադրեց տարբեր ժողովրդները իրաւունքով հարկադրելու: Սպառումը աճելով, հարկ եղաւ նաև շտապնել արտադրիչներու թիւը. արտադրութիւնն ալ բազմանալով, հարկ եղաւ բազմապատկել նաև ապրանք քչելու միջոցները: Ժողովուրդները հասկցան որ իրարու մտանալով և իրարու փոխադարձ երաշխաւորութիւններ տալով, ամեն տեղ աւելի լաւ և նոյնպէս աւելի աժան կրնան ապրիլ: Եւ օգտակարութեան ներշնչուած այս համաձայնութիւնէն յառաջ եկած է՝

Ա. Վաճառականական դաշնադրութիւններ որոց թիւը տարուէ տարի աւելնալու վրայ է և որոցմով ազգերը

իրարու կը կապուին ըստանալու համար մին միւսէն, իրենց արտադրութեանցը և ճարտարութեանցը մասին, ամենէն աւելի նպաստաւոր պայմանները:

Բ. Նաշարկութեան դաշնադրութիւններ որոց նպատակն է մեծ զարգացում մը ապահովել ծովային և գետային վաճառականական գործառնութեանց, պայմանելով նաև հանգստի, նաւուղղութեան, և այլն, համար հաստատուած տարբերութիւն վրայ զեղչումները, թեթեւեղութիւն ծովային հարկերը որք կը ծանրանային փոխադրութեան ծախքերուն վրայ՝ ազատ կացուցանելով գետերու նաւարկութիւնը առ այդ հաստատուած վաճառականական մենաշնորհներուն ջնջմամբը, և հրամայելով վաճառականութեան այս կարևոր ճամբաներուն՝ ծախքերուն աւելնուն մասնակցութեամբը՝ պահպանումը և հսկողութիւնը:

Գ. Մասնաշար պայմանադրութիւններ որք կ'արտօնեն օտար երկարադրիւններուն միացումը, հակառակ ազգագրիտական առարկութիւններու և ազգային անվստահութիւններու քրիստոսարական և հեռագրական պայմանադրութիւններ. արտայանձնութեան (extradition) դաշնադրութիւններ...:

Ուրեմն մարդկային սեռին միութեան մեծագոյն գաղափարը կը ձգտի ամեն օր մտնելու իրականութեան շրջանին մէջ: Գիտութեանց ծաւալումը, ընկերային հարստութեան զարգացումը, հեռագրական հաղորդակցութեանց և երկաթուղեաց բազմաւորութիւնը, մաքին դեռ աւելի արագ յարաբերութիւնները, էլեկտրականութեան արագ արագ հսկայաքայլ յառաջգիմութիւնը, զազախարներու բարձրացումը, այլ ևս ընդ երկար չի պիտի կրնան համաձայնիլ երկրագնդիս դանազան կէտերուն վրայ միջազգային շահերուն անվերջ և քմածին կարատումին հետ:

Ազգաց — իրաւագիտութեամբը զբաղող իրաւագետներուն զանազան դպրոցները. — Կրօնիւս հիմնած էր բնութեան և ազգաց իրաւունքին գիտութիւնը, իրմէ վերջը իրաւագէտները բաժնուեցան. բազում տարբեր

դպրոցներ ձեռացան՝ Խնաստասիրական դպրոց և Պատմական դպրոց:

Խնաստասիրական դպրոցը զՄիջազգային Իրաւունքը բնական Իրաւունքին պատուէրներէն կը հանէր:

Պատմական դպրոցը սովորութիւններու և դաշնագրութիւններու մէջ կը զեռեղէր դրութիւնը այն կանոններուն որք պարտին առաջնորդել ազգերը իրենց փոփոխակի յարաբերութեանցը մէջ:

Ստորաբաժանում Խնաստասիրական դպրոցին. — Խնաստասիրական դպրոցը ինքնիրեն բաժնուեցաւ: Կրօնցիտու զանազանած էր Ազգաց իրաւունք մը բնական և անփոփոխելի, ածանցեալ օրէգերական բանին պատուէրներէն և Ազգաց — Իրաւունք մը դրական կամ քմածին, հիմնուած սովորութիւններու և դաշնագրութիւններու վրայ:

Փուֆէնտորֆ յայտնապէս ուրացաւ գոյութիւնն ու ստիպողական զորութիւնը ազգաց դրական իրաւունքի մը՝ ածանցեալ ազգաց յայտնի կամ լսելեայն պայմանադրութիւններէն, և շատացաւ նկատելով զՄիջազգային իրաւունքը լոկ որպէս բնական օրէնքին գործադրութիւնը ժողովրդոց յարաբերութիւններուն:

Ուրեմն Պատմական դպրոցը կրնայ պարծիլ իրեն պետուեննալուն Կրօնցիտուը, որն որ միւսոյն աստիճանն է նաև իմաստասիրական դպրոցին: Գալով Փուֆէնտորֆի և նոյնպէս Թոմազիուսի դպրոցին, զրեթէ անհետացած է այսօր: Ամեն իրաւագէտները կը հետևին այժմ պատմական դպրոցին տուած զարկին:

Միջազգային իրաւագիտութեան ոչունակը ծրագրին ոչութեան ծրագրի ծրագրի. — Մէթոտուոր կերպով ուսումնասիրելու համար ամբողջութիւնը այն կանոններուն որք կ'որոշեն ազգաց փոփոխակի իրաւունքները և պարագերը, նախ կը քննեն թէ որո՞նք են Միջազգային Իրաւագիտութեան ենթարկուած նիւթերը. և յետոյ կը լուծեն այս նիւթերուն իրաւունքները. և վերջը աչքէ կ'անցնեն անոնց յարաբերութիւնները՝ ի հաշտութեան և ի պատերազմի:

Քանի որ պատերազմը հաշտութեան կ'առաջնորդէ, կը գծեն այն կանոնները որք կ'իշխեն խաղաղասէր յարաբերութեանց վերահաստատմանը: Վերջապէս կը հարցնեն միջազգային դաշնագրութիւններուն թէ որո՞նք են այն սկզբունքները զորս յաջորդաբար նուիրագործած են: Այս ծրագիրը կարելի է հետևեալ կերպով գծել՝



Ազգաց հաշտարոշքեան և անկախութեան իրաւունքը : — Արդէն խօսած ենք ազգաց վրայ՝ զայնս իբր բարոյական և հաւաքական էակներ նկատելով . զբաղած ենք միջազգային օրինաւոր ինքնապաշտպանութեանը խնդրովը : Ազգաց — իրաւագիտութիւնը կուգայ հաստատելու այն սկզբունքը թէ ազգերը իրարու մէջ հաշտար են և անկախ :

Հաշտարոշքիւնը և ազատոշքիւնը ուրեմն Բնական Միջազգային իրաւագիտութեան սկզբունքներ են : Ազգերը հաշտար են իրարու մէջ, և, աւելին կայ, անկախ են : Ազգերու հաշտարոշքիւն ըսելով սա կ'իմանան որ իւրաքանչիւր ազգին իրաւունքները պարտին յարգուիլ միւսներունին շափ առանց խարսթեան անոնց որք զօրաւոր են, կամ անոնց որք երկրորդական զիրք մը ունին ժողովրդոց քարտէսին վրայ : Իրենց փոխադարձ անկախութիւնը կը պահանջէ որ իրենցմէ իւրաքանչիւրը և ոչ մի բան ընէ միւսները կործանելու համար, և ոչ ալ զայնս զրկելու իրենց հողէն, կամ նոյն իսկ մէկ գաւառէն : Իւրաքանչիւր ազգ ինքը միայն տէր ըլլալով դատելու այն որ իրեն վայելէ ընել կամ ոչ, պէտք է ուրեմն որ թողուի իւր ազատութիւնը վայելելու հանդարտօրէն : Բռնադատելու իրաւունքը կը ծագի, կը սեն, միայն ազատութեամբ կնքուած պարտականութիւնէ մը : Հետեւաբար, բնաւ միջամտութիւն միւս ժողովրդոց ներքին գործերուն մէջ : Ազգ մը, յետամնաց զոլով հանդերձ, միայն ինքը ձեռնհասութիւն ունի կարգադրելու իւր քաղաքական, քաղաքային և կրօնական կազմաւորութիւնը : Քաղաքակրթութեան մասին մարդօրսութիւնը (proselytisme), կը սեն, առջի բերան կը հրապուրէ, բայց և այնպէս չի գաղբիլ վնաս մը ըլլալէ ժողովրդոց անկախութեանը դէմ : Այսու հանդերձ ոչ — միջամտութեան սկզբունքը բացառութիւններ ունի որք հիմնուած են անհատական պահպանութեանը պարտքին վրայ : Ժողովուրդները պարտին թոյլատրել իրենց զրացիներուն միայն այն արարքները որք չ'են վտանգեր իրենց կամ իրենց ազգակիցներուն ապահովութիւնը : Սահմանադրութիւն մը որ գուրսն ալ տարածուելու ձգտումներ կը ցուցնէ, անհրաժեշտ կը կացուցանեն նախաձեռնութիւն

նը պաշտպանողական միջոցներուն : Բայց կառավարութեան մը տապալումը չ'արդարացներ օտար միջամտութիւնը, ուրիշ բան է եթէ այդ միջամտութիւնը խնդրուած է քաղաքացւոց անկեղծօրէն յայտնուած մեծամասնութենէն :

Սեփականոշքեան իրաւունքը . — Հողին սեփականութեանն է որ կապուած է ժողովրդոց՝ իբր ազգք գոյութիւնը . թափառաշրջիկ ժողովուրդները ազգութիւն մը կը կազմեն միայն երբ կը հաստատուին հողի մը վրայ : Սեփականութեան իրաւունքը ուրեմն միջազգային բնական իրաւագիտութեան մէկ ըսկզբունքն է : Հող (territoire) կը կոչեն ազգի մը զբաւած և իւր օրէնքներուն ենթարկուած երկիրներուն ամբողջութիւնը : Ժողովրդեան մը բարգաւաճման առաջին տարրը իւր հողը ուղածին պէս և ազատօրէն տրամադրելն է : Ան գերիշխան է իւր սահմաններուն մէջ . իւր զբաւած հողին և ոչ մէկ մասը կարելի է ենթարկել օտար տիրապետութեան մը առանց յիւստելու անոր գերիշխանութեանը :

Ինչպէս անհատներու՝ ազգերու համար ալ սեփականութիւն ըստանալու միջոցներն են գրաւուշքը (occupation) և պայմանադրութիւնները (conventions) : Կան ժողովուրդներ որք ընդունած են՝ իշխանին գահակալութեամբը՝ ասոր ընչից փոխանցուելու ազգային ըստացուածոց : Երբ ազգ մը պատշաճ կերպով զբաւած է երկիր մը, ասով իր ըստացած սեփականութեան իրաւունքը այդ հողին ամեն մասերուն վրայ կ'արտօնէ զինքը զայն տրամադրելու բոլոր այն կերպերով որք չ'են վերաւորեր անհատից կատարեալ իրաւունքները : Ամենուրեք, ապաքէն, կ'ըսեն, ուր և ոչ մէկը կարող է ցուցնել հաստատագրեր որք բաւ ըլլան ըստուգելու իւր սեփականութեան իրաւունքը հողի մը վրայ, կամ թէ՛ չ'է կարող վկայութիւն բերել կամ ըստացուածք մը կամ առանց բռնութեան տեղի ունեցած գործածութիւն մը, իւրաքանչիւր ոք ազատ է անոր տիրանալու, գործելու համար անդանոր ճարտարութեան այն ճիւղը որ իր շահերուն աւելի համաձայն պիտի գայ : Այդպէս է ահա՛ որ երբ ազգ մը կը գանէ երկիր մը մինչև այն ատեն ոչ — զբաւուած, եթէ հոն չ'ինէ տեւական հաստատութիւններ, նա սոսկ այս գործողութեամբը կ'ըստանայ

այդ երկրին սեփականութիւնը: Մայնպէս արգիլեալ չ'է նաև կնքել հողի փոխանակութիւններ դրացի ժողովուրդի մը հետ, և ընդունիլ պարզեւտրութիւնը որով սա ազատօրէն կը թողու ուրիշ իւր զբաւած հողը: Բայց անիրաւ տեղն է որ շատ մը իրաւագիրներ զաշխարհակալութիւնը կը նկատեն իբր օրինաւոր իրաւունք մը գերիշխանութեան: Աշխարհակալութիւնը ուրիշ բան չ'է եթէ ոչ գաղանային բընութիւն և բընութիւնը և ոչ մի իրաւունք կրնայ պարզեւել: Եթէ նուաճուած երկիրը ընդունի յետոյ բացայայտ կերպով կամ լռելեայն յաղթողին գերիշխանութիւնը, ատի հաւանութեան է, և ոչ թէ աշխարհակալութեան որ կ'ածանցի այս վերջնոյն իրաւունքը:

Սահմանագրութիւնները (Les frontières). — Եթէ հողի մը սեփականութիւնը ազգերու գոյութեանը էական մէկ պայմանն է, կարևոր է ուրիմն որոշելը՝ ճշգրիտ կերպով մը՝ Տէրութեանց սահմանները: Սահմանագրութիւններու լաւ որոշումը առջևը կ'առնու շատ մը գժտութիւններու և պատերազմի պատճառներու որք շատ ըստէպ տեղի կուենան սահմանակից երկիրներու ծայրը հաստատուած ժողովրդոց միջև: Այս սահմանագծութիւնը (délimitation) գլխաւորապէս կախումն ունի տեղական պարագաներէ, սակայն կան կարգ մը ընդհանուր սկզբունքներ որք կրնան իբր առաջնորդ ծառայել կառավարութեանց: Իրաւագիրները ընդհանրապէս կը հաստատեն որ եթէ այն անըրպետը որ կը բաժնէ դրացի ժողովուրդները բացարձակապէս միաձև է, քանի որ պատճառ մը չի կայ կենալու այս ինչ կամ այն ինչ կէտին վրայ, շատ բնական բան մըն է նշանակել բաժանումը այդ ժողովուրդներէն հաւասար հեռաւորութեամբ: Բայց եթէ մէկ կողմանէ կայ միւսէն աւելի բազմամարդ ժողովուրդ մը, սահմանագիծը պարտի բաժանել այդ անըրպետը նոյն իսկ սահմանակից ժողովրդոց համեմատութեամբ: Եթէ խնդիրը գետերու կամ լիճերու վրայ է որք կը բաժնեն երկու երկիրները, սովորաբար սահմանագրութիւնը կը հաստատեն յատակին մէջտեղը, մէն մի երկրի իշխանութեանց իրաւասութիւնը կարգադրելու համար, բայց, գալով այդ ջուրերուն գործածութեանը, հաւասարապէս

օգտակար է սահմանակից ժողովրդոց որպէս զի իրարու տան ամենէն մեծ ազատութիւնը, ազատութիւն մը որ համաձայնի եզերարեակ սեփականատեարց իրաւանցը պահպանութեանը և երկու եզերաց վրայ կատարուած հանրային շինութեանց պահպանմանը հետ: Ազատութեան այս փոխադարձութեանը դէմ յարուցուած խոչընդոսները գերազանցօրէն հակառակ են ծառայութեան և օգնութեան այն փոխանակութիւններուն որք յայտնութիւնն են ընկերականութեան: Գալով լեռներուն երկրագործութեան, ճարտարութեան և վաճառականութեան պէտքերը միանալով Տէրութեանց ներքին և արտաքին ապահովութեանը շահուն, կը պահանջեն որ զառիվայրերը սեփականութիւնը ըլլան այն ազգին որոյ առջև կը խոնարհին: Ասկէ դատ, ինչպէս որ լեռներու խիւճերը (gorges) գիւրութիւն կ'ընծայեն երկու կողմի երկիրներուն շարագործներուն խոյս տալու համար արգարութեան հետապնդումներէն, և կառավարութեանց ալ վարելու համար անսկիւալ յարձակումներ յարակից գաւառներու վրայ, անհրաժեշտ է թողուլ դրացի Տէրութեանց արամադրութեանը ներքև այդ խիւճերուն մուտքերը, որպէս զի հաստատեն անդանոր հսկողութեան կայաններ:

Ծովը. — Ծովերու սեփականութեան խնդիրը երկարատեան զբաղեցուցած է միաքերը: Ժէ. դարուն մէջ՝ Սպանիա և Փորթուգալ հետամտած են Նոր - Աշխարհին ծովերուն վրայ գերիշխանութիւն ունենալ, յենդովերենց գտած և տիրած ըլլալու իրաւունքին վրայ: Հօլանտան բողոքեց, և Կրօցիոս գրեց, 1609ին, ծովերուն ազատութեան վրայօք իւր գիրքը՝ հաստատելու համար Ատլանտեան և Խաղաղական Ովկիանոսին մէջ ազատօրէն նուարկելու հասարակաց իրաւունքը: Քսան տարի վերջը, Անգղիա հետամուտ եղաւ Բրիտանական ծովուն սեփականութեանը և իշխանութեանը. Մէլըն 1635ին հրատարակեց յիշատակագիր մը՝ ՚ի հաստատութիւն այս յաւակնութեան: Լուզովիկոս Ժ. Գ. մերժեց անոր դրոշի իրաւունքը (droit de pavillon), և այս գժուարութիւնը ուրիշ հեռանք չունեցաւ: Հիւում, անգլիացի պատմագիրը, ինքն իսկ կը հաստատէ որ Ազգաց - Ի-

բաւագիտութեան սկզբունքները խստիւ մը կը մերժեն ծովու գոգերէն (baie) և նեղուցներէն դուրս գերիշխանութեան յաւակնութիւնները: Վենետիկ կուզէր գերիշխան մնալ Ազրիականին վրայ. առձեռն ին մատանին որ ծովը կը նետուեր, նշան մըն էր այդ բացարձակ իշխանութեան, և ուրիշ Տէրութիւններ ալ այդպիսի փափաքներ կը տածէին: Սակայն նոր ազգաց իմաստութիւնը բերլ տուաւ այդ բազմատեսակ յաւակնութիւնները: Տիեզերականապէս հաստատուած է որ կարելի չ'է ըստանալ ծովուն վրայ և ոչ մի իրաւունք սեփականութեան, և թէ ծովը՝ իւր ալեացը շարժականութեանը բերմամբ՝ տեղի չի տար առ այդ: Ուրեմն և ոչ մի ազգ կրնայ օրինաւորապէս արգելուլ որ միւսները չի վայելեն, ծովերու համայն տարածութեանը մէջ, նաւարկելու և ձկնորսելու անկորնչելի ազատութիւնը: Այսու հանդերձ մէն մի Տէրութեան իշխանութիւնը կը տարածուի այն նաւահանգիստներուն, նաւերու կայաններուն, ծովածոցերուն (golfe) և ծովագոգերուն (baie) վրայ որք իւր հողին աշխարհագրական ձևակերպութիւնը կը կազմեն: Միւս կողմանէ ալ, պաշտպանութեան և ապահովութեան իրաւունքը իբր հողին մասը կը նկատէ ծովը որ կ'ողողէ ափունքը, որոշեալ ընդարձակութեան մը մէջ: Սաի այդ շրջանակին մէջն է որ ծովային ոստիկանութիւնը, նոյնպէս և ձկնորսութիւնը, կը վերաբերին մի միայն գերիշխան Տէրութեան և հող է որ կը զործագրուի մաքսային հսկողութիւնը: Ինչպէս կը հաստատեն այդ սահմանագիծը (ligne de démarcation): Ոմանք զայն կը սահմանափակեն տեսանելի եզրերին ամենէն դուրս ցցուած ծայրին վրայ գրուած թնդանօթի մը ամենէն զօրաւոր չափին. ոմանք ալ այնքան առաջ կը մղեն զայն որքան ցամաք որ տեսնուի հեռուէն ծովուն վրայ. ուրիշներ ալ վերջապէս, զանց ընելու համար այս առաջարկութիւններուն պարունակած տարաամութիւնը և անստուգութիւնը, յիշեալ գիծը կը հաստատեն ամենէն մօտ եզրերէն երկու, չորս և մինչև անգամ վեց մղոն հեռու: Պէտք է խոստովանիլ որ ասոնց ամենքն ալ հաւասարապէս քմածին են. այս տեսակ սահմաններուն որոշումը կրնայ մի միայն յառաջ գալ տէրութեանց միջև կնքուած պայմանագրութիւններէն և 'ի նկատի առն-

լով տեղական պարագաները: Բայց պէտք չ'է չափազանցել այդ գծին կարևորութիւնը: Այս սահմանը ուրիշ նպատակ չ'ունի եթէ ոչ առաջըր առնուլ այն ամեն ձեռնարկութեան որ եզերաբնակ ազգին սեփականութեանը կամ ապահովութեանը վնասելու հանգամանքն ունի: Սակէ կը հետևի որ պարտաւորութիւն չի կայ պահանջելու և ոչ իրաւունք մը և ոչ յարգանքի ցոյց մը այն նաւերէն որք ծովին զօրութենէն կամ իրենց նաւարկութեան հետևանք, այդ գծին մէջէն հանգարտիկ մը կ'երթան եզերաց երկայնութեամբը: Եթէ, սակայն, եզերաբնակ ազգը ուզէ ենթարկել օտար նաւերը նպաստելու՝ տուրքով մը՝ փարօններու, ազատարարութեան միջոցներու և կամ թէ նաւարկութեան օգտակար ուրիշ հաստատութիւններու պահպանմանը, իրաւունք պիտի ունենայ զայդ ընելու, բաւ է որ օտար ազգերը արտօնութիւն ունենան վիճարանելու առ այդ հաստատելիք սակացոյցներուն վրայ:

Սեփականութիւնը կը կորսուի, որպէս անհատներու այնպէս ալ ազգերու համար իրաւունքին առարկային շիջմամբ, ըստ բաւականի հաստատուած քմամբ, ուրիշի թողով, և երբ սեփականութիւնը սաացուած է զաշնադրութեան մը զօրութեամբ, պայմանագրութեան պայմանաժամին լրանալովը. ուրիշ բան է եթէ պայմանաժամը յայտնի կերպով կամ լռելեայն՝ երկարացուցուած է: Երկու կողմանց փոփոխակի կամքը միևնոյն արդիւնքը կուտայ, որպէս և եղծիչ պայմանը (condition résolutoire) որն որ, երբ կատարուելու ըլլայ, իրերը այնպիսի վիճակի մը կը վերածէ որ իբր թէ պարտականութիւնը տեղի ունեցած չ'ըլլար: Վերջապէս ժամանցումը (prescription) կրնայ տեղի ունենալ որպէս մասնաւորաց այնպէս ալ Տէրութեանց միջև: Բայց որ սաեմն է որ երկու ազգաց մէջ ժամանցում (prescription) կըստացուի: Այս կէտը ուրիշ կերպով չի կրնար որոշուիլ եթէ ոչ բանակցութիւններով:

Պայմանադրական իրաւունքներ. — Պաշնադրութիւններ. — Անկախ եսկ եղող Տէրութեան անուանը զօրծող՝ կտուավորութեան ամենէն էական և ամենէն կուրևոր իրաւունքներէն մին՝ դաշնադրութիւններ (traités)

Բանակցելու և կնքելու իրաւունքն է: Այս բանը կը նշանակէ երկու կամ շատ մը ժողովուրդներու միջև տեղի ունեցած պայմանագրութիւնները, որոցմով մին կը պարտաւորուի հանդէպ միւսներուն, կամ կուտայ անոնց ինչ ինչ իրաւունքներ: Բացարձակ միապետական կառավարութիւններուն մէջ՝ միջազգային իրաւունքներ պայմանելու և դաշնագրութիւններ կնքելու իրաւունքը վեհապետին ձեռքն է. ռամկավարական դրութեամբ ընթացող կառավարութիւններու մէջ, այս իրաւունքը աւելի մասնաւորապէս կը վերաբերի օրէնդիր իշխանութեան: Բանակցութիւնը (négociation) շարք մըն է անձնիւր առաջարկութեանց և ասոնց ընկերացող վիճարանութիւններու: Կամքերու աջակցութիւնը, որ կը կազմէ պայմանագրութիւնը, տեղի կուտայ առաջարկութիւններու, առաջարկներու որք կրնան յաջորդաբար ետ առնուիլ, փոփոխիլ և նորէն յառաջ բերուիլ: Այդ առաջարկութիւնները, ՚ի մի բան, այդ բանակցութիւնը կը կատարուի դործադիր իշխանութեան կողմանէ՝ նշանակուած զիւրաւարական գործակալներու միջոցաւ: Վաշերագործուելը (ratification) դաշնագրութեանը համար կառավարութեան կողմանէ տրուած հաճութիւնն է: Ատի ընդհանրապէս վերապահուած է (réservé): Իւր արդիւնքն է վերջնական կացուցանել յետագականութեամբ (rétroactivité), եթէ երբէք տեղի չ'է ունեցած հակառակ պայմանագրութիւն մը, դաշնագրութիւնը որ, մինչև այն ատեն, ուրիշ բան չ'էր եթէ ոչ պարզ ծրագիր մը. իւր նպատակն է հաստատել որ լիազօրը (le plénipotentiaire) իւր իշխանութեանցը սահմանը անցած չ'ըլլայ: Գործագրութիւնը համարժէք է վաւերագործման:

Դաշնագրութիւն մը վաւերական ըլլալու համար պէտք է որ անոնք որ զայն կը բանակցին ունենան զայն կընքելու համար պէտք եղած հեղինակութիւնը, որ երկու կողմերուն հաւանութիւնը յայտնուած ըլլայ իրականապէս և պարզապէս, որ այս հաւանութիւնը ըլլայ ազատ և փոխադարձ:

Միայն օրինաւոր և կանոնաւորապէս պաշտօնավարող կառավարութիւններն են որ արտօնեալ են յանձնառութիւններ ընելու այն Տէրութեանը համար որուն ան-

ունը կը գործեն: Ուրեմն խոհեմութիւնը խորհուրդ չի տար բանակցութեան մտնելու ապստամբութեան մէջ եղող ժողովրդեան մը հետ, մինչև որ անիշխանութեան տեղը չի գայ բռնել որոշ և մնայուն կառավարութիւն մը: Գալով հաւանութեան, ատի կրնայ տրուիլ թէ յայտնի կերպով և թէ լռեցեայն, թէ բերանացի կերպով և թէ զրաւոր կերպով: Բայց աւելի խոհեմութիւն գործուած կ'ըլլայ եթէ զրաւորապէս խմբագրուին ընդունուած պայմանները. կարևոր է նաև զրի առնուլ եղած առաջարկութիւնները: Հաւանութեան ազատութիւնը, որ էական պայման մըն է ամեն դաշինքներու, առ երեսս բան մը եղած կ'ըլլայ եթէ սխալմամբ կամ բռնադատութեամբ տրուած ըլլայ. այն պարագային մէջ, օրինակի համար, ուր բանակցողին կեանքը, պատիւը, ազատութիւնը վրտանցի մէջ է. բայց պէտք է որ այս պարագաները ազէկ մը ապացուցուած ըլլան: Գալով փոխադարձութեան, խոստումը և ատոր ընկալումը կազմելու համար ընդունուած ձևը շատ կարևորութիւն չ'ունի: Այսու հանդերձ նոր սովորութիւնը կը պահանջէ որ բերանացի հաւանութիւնները կարելի եղածին չափ փոխարկուին զրաւոր հաւանութիւններու՝ վէճերու տեղի չի տալու համար:

Դաշնագրութիւնները իրաւունք կուտան պայմանադիր ազգէն պահանջելու անոնց պարունակած պայմաններուն կատարումը և նոյն խկ առ այդ զայն բռնադատելու, երբ մերժէ, բաւ է որ իւր կողմանէ զայնս կատարած ըլլայ, կամ սկսած ըլլայ կատարելու:

Միջազգային պայմանագրութեանց նիւթ կը կազմեն ընդհանրապէս սահմանագծութիւնները, հողի փոխանցումներ կամ գնումներ, փոխանակութիւններ կամ պարզեատուութիւններ. կան դաշնագրութիւններ արտաշանձնութեան (extradition), զրական, արուեստագիտական և ճարտարական սեփականութեան. թղթատարական պայմանագրութիւններ. ձկնորսութեան, երկաթուղիներու և ելեկտրական հեռագրերու վերաբերեալ կանոնագրեր. վաճառականական, նաւարկութեան, կշիռքներու և չափերու միաձևութեան, յարձակողական և պաշտպանողական նիդակակցութեան դաշնագրեր, և այլն:

Այս բազմատեսակ դաշինքներուն մէջ պէտք է զանազանել Առժամեայ պայմանադրութիւնները և բուն դաշ-

նադրոշքիւն կոչուածները: Առժամեայ պայմանագրութիւնները, որպիսի են սահմաններու, փոխանակութիւններու, և այլն, պայմանները, անմիջական կատարում մը ունին, և են մշանջենաւոր: Երբ մէջ մը կատարուեցան, այլ ևս կը մնան անկախաբար զայնս կնքող կառավարութեան ձեւին մէջ և նոյն իսկ պայմանագիր Պետութեան գերիշխանութեանը մէջ պատահած փոփոխութիւններէն:

Ի՞նչ պիտի ըլլար արդիւնքը այն պայմանին որով կառավարութիւնը ուզեր իր կողմանէ կնքուած գաշնագրութիւնը յար ընդ միշտ ստիպողական հռչակել: Յայտնի է որ այժմեայ սերունդը չի կրնար կապել ապագայ սերունդը: Գաշնագրերը կը ստիպեն ազգերը այնքան ատեն որքան որ շարունակէ գոյութիւն ունենալ այն սկզբունքը որոյ վրայ կը հանգչի իրենց վաւերականութիւնը: Այն ինչ գաշնագրութեան կատարումը երկու կողմերէն միոյն վնաս մը կը պատճառէ զոր չի կրնար բաւնալ, և զոր միւսը չի կրնար սուտել, գաշնագրութիւնը պետք է որ ջնջուի: Վերջապէս պէտք է զանազանել միջազգային պայմանագրութիւններուն մէջ գլխաւոր յօդուածները (*articles principaux*) և երկրորդական յօդուածները (*articles accessoires*): Առջիններուն խզումը երկրորդներուն խզումը առաջ կը բերէ. բայց երկրորդական յօդուածները կրնան իյնալ առանց ատկէ վնաս մը գալու գլխաւոր յօդուածներուն զօրութեանը: Վեհաժողովներու մէջ է որ լիազօրները կը վեճարանեն և կ'ընդունին, իրենց կառավարութեան անուանը, գաշնագրերուն պայմանները և ազգերուն մէջ խաղաղութիւնը պահելու ամենէն յատուկ միջոցները:

Խաղաղութեան պահուն ազգերու մէջ եղած յարաբերութիւնները. — Գեապանութեան իրաւունք (*Droit d'Ambassade*). — Գիւանագիտութիւնը (*la Diplomatie*) բանակցութիւններու արուեստն է: Պետութեանց շահերուն վրայ բանակցելու և միջազգային իրաւագիտութեան կանոնները գործադրելու համար կառավարութիւնները ստիպուած են զիմելու զանազան տէրութիւններու միջև ընդունուած ձևերու, որք կերպիւ իւրք կը կազմեն Ազգաց Իրաւունքին գառավարութիւնը: Ուրեմն

գիւանագէտը (*le diplomate*) իւր ազգին փոխանորդը ըսել է:

Գիւանագիտութեան գաղղիներէնը, ինչպէս որ ըսինք և ինչպէս որ այ ծանօթ է, *diplomatie*ն է որ կուգայ յունարէն *δύπλωμα* բառէն: *Diplôme*ը երկու օրինակ ունեցող գրուածք մը ըսել է. տէրութեանց միջև եղած պայմանագրութիւնները գրուած են բազում օրինակներով: *Diplomatique*ը (*la*) կամ Գիւանագիտութիւնը ծանօթութիւնն է հին *diplôme* ներու: Գիւանագիտութեան նիւթն է հոգալ ազգաց ապահովութիւնը, ներդաշնակութիւնը, առաջըր առնուլ խզումներուն՝ գուհացուցիչ բացատրութիւններով և շուտով վերջ տալ պատերազմներուն՝ բարեկամական միջնորդութիւններով. վերջապէս, դիւրացնել ժողովրդոց յարաբերութիւնները պահելով անոնց մէջ եղբայրսիրական զգացումներ: Արդարութիւնը և ուղղամտութիւնը պարտին միշտ կազմել անոր հիմը և եթէ, երբեմն, վարպետութիւն բանեցնելը արտօնուած է, ասիկայ առաջն առնելոյ համար է ազգերու միջև խզման առիթներուն զոր շար նախանձը, փառասիրութիւնը և շահասիրութիւնը կը ձգտին անդադար իրարու ձգելու: Երկար ատեն լատիներէնը եղած է գիւանագիտութեան լեզուն, բայց Լուգովիոս Ժ. Բ. էն ի վեր ֆրանսերէնը կը տիրէ գիւանագիտական ասպարէզին մէջ իբր լեզու: Փրոթոքոլը (*protocole*) գիւանագիտաց գործերուն բանաձևն է. ատի միանգամայն վեհաժողովի մը քարտուղարին կողմանէ գրի առնուած ատենագրութիւնն է, և կը մնայ գիւաններուն մէջ այն տեղոյն ուր գաշնագիրը կնքուած է. վերջապէս ֆրոթոքոլ ըսելով կ'իմացուի ձևակերպութեանց, էթիքէթի (*étiquette*), քաղաքավարական ձևերու (*cérémonial*) ամբողջութիւնը:

*Cérémonial*. — *Cérémonial*ի խնդիրները երկրորդական չ'են: *Étiquette*ի կանոններուն գործադրութիւնը կը կազմէ զմիջազգային քաղաքավարութիւնը, որն որ կը նպաստէ ժողովրդէ ժողովուրդ եղող յարաբերութեանցը դիւրանալուն: Արպէս մտանաւորոյ այնպէս ալ է ազգաց: Պետութեանց և անհատներուն արժանապատուութիւնը կը պահանջեն որ, կեանքին յարաբերութիւններ

բուն մէջ, և ոչ մէկ վնաս հասցուի իրեն ըլլալիք մեծաբանքին, առանց անմիջական հատուցման մը (réparation): Օտար cérémonialը գործադրելուն մէջ թերանալը՝ ժողովրդոց մէջի խաղաղութիւնը խանգարելու ենթարկել է ինքզինքը: Ազգերը վիճակեալ գոլով իրարու պէտք ունենալու, տարրական պարտականութիւն մըն է իրենց համար զիրար փոխադարձաբար յարգելը:

Մեծարանքի այս փոխադարձութիւնը կը բղխի այն կատարեալ հաւասարութենէն որ կայ Տէրութեանց մէջ, իրենց իրաւունքներուն յարգանքին տեսակէտով: Ատկէ է որ ամենէն մեծ միապետները պարտին ճանչնալ՝ աւմենէն փոքր ժողովրդոց պետերուն անձին մէջ՝ ազգի մը ներկայացուցիչներու գերագոյն հանգամանքը. այդպէս ահա Տէրութիւնները, որքան ալ զօրաւոր ըլլան, իրաւունք մը չունին պահանջելու իրենց զրացիներէն դաշնադրութեամբ չ'ընդունուած պատուոյ և նախամեծարանաց մասնաւոր ցոյցեր: Ազգերու անկախութիւնը իրենց իրաւունք կուտայ ճանչնալու պարզապէս, կամ պայմանաւ, կամ թէ մերժել ճանչնալու այն պատուանունները զոր մէն մի ժողովուրդ կրնայ տալ իւր պետին, այն ձևը զոր ազատ է տալու իւր կառավարութեանը: Բրուսիոյ Ֆրէտէրիք թագաւորը, թագաւոր յորժորջումը աննելէն վերջը, այս տիտղոսը միայն 1701ին ճանչցուեցաւ Անգղիոյ, Ստորին — Նահանգաց, Զուիցերիոյ և Փորթուգալի կողմանէ. 1713ին, Գաղղիոյ և Սպանիոյ կողմանէ. 1723ին, Շուէտի կողմանէ. 1764ին, Լեհաստանի կողմանէ. 1787ին, Ս. Պապին կողմանէ: 1804ին Նափոլէօնին իրեն տուած կայսր Ֆրանսուսացոց տիտղոսը համայն Եւրոպիոյ կողմանէ ընդունուեցաւ, ի բաց ստեալ Անգղիայէ: Բայց արեւելեան խաղաղութեան շահը, որն որ մարդկութեան շահն է, կը խնդրէ ազգերէն այս մասին քիչ մը մարդահասճոյութիւն գործածել, իրենց ապագան չի վնասելու սահմաններուն մէջ: Միւս կողմանէ յայտնի է որ Պետութիւն մը չի կրնար իրեն վերագրել նախաթոռութիւնը (préséance), բնականաբար և իրաւամբ:

Նախարարութիւն (préséance). — Նախարարութիւնն է առաջնութիւն կարգի. առաջին տեղը բռնելու իրաւունքն է, այսինքն այն տեղը որ, ընդ մէջ բազմաց,

նկատուած է իբր ամենէն պատուաւորը: Նախաթոռութեան խնդիրները սովորաբար կը ներկայանան անձնական տեսակցութեանց մէջ ազգաց պետերու կամ դայնս ներկայացնող պաշտօնէից, հանդիսաւոր այցելութեանց մէջ, արարողութեանց առիթներու մէջ, ամեն տեսակ հանրային թղթերու մէջ, և մանաւանդ միջազգային դաշնադրերու պարունակութեանը և ստորագրութեանը մէջ: Օտար cérémonial ըսելով կը հասկըցուի ամբողջութիւնը այն կանոններուն որք կը վերաբերին պատիւին, կարգին և ուրիշ պատուարի նշաններու Տէրութեանց, իրենց Պետերուն և իրենց ներկայացուցիչներուն: Ընդհանրապէս նախաթոռութիւններուն կատարումը կը հանգչի դաշնադրութիւններու վրայ: Այս ճամբով յանձնառութիւն ընող տէրութիւնները այլ ևս պարտաւորութեամբ մը կապուած են և չ'են կրնար հեռանալ դաշնադիրէն, առանց նախատիք մը գործելու: Երբ պայմանադրութիւն չ'ըլլայ՝ պէտք է համաձայնիլ cérémonialի մասին այնու որ հաստատուած է ընդհանուր կերպով ընդունուած սովորութեամբ մը: Ահա՛ այդպէս է որ միջազգային ներդաշնակութիւնը պահպանելու, զրացի ազգերու հետ բարեկամական կապեր հաստատելու և այս ազգերէն միեւնոյն մարդահասճոյութիւններ ըստանալու փափաքը հաստատած է cérémonialի կանոններ որք ընդհանրապէս կը հանգչին մի միայն պարզ սովորութեան մը վրայ զոր քաղաքակրթեալ Տէրութիւնները կը յարգեն՝ սակայն աւելի խղճմտօրէն քան ինչ որ չ'են ըրած երբեմն ամենէն հանդիսաւոր դաշնադրութիւններու գործադրութեանը մասին: Արո՞նք պարտին ըլլալ նախաթոռութեան հիմքերը: Առ այդ առաջարկուած է Պետութեանց անկախութեանը հնութիւնը, կամ քրիստոնէութիւնը ընդունելուն մէջ առաջնութիւնը, կամ արքայական սան հնութիւնը: Բայց, մէկ կողմանէ, պատմութեան ամենէն տարրական ծանօթութիւնը մեզ կ'ուսուցանէ որ չի կայ ժողովուրդ մը որ բազում անգամ անցած չ'ըլլայ ազատութեան, հպատակութեան և աշխարհակալութեան շրջաններէն. միւս կողմանէ, Միջազգային Իրաւագիտութիւնը, Հանրային Իրաւագիտութեան պէս, Մասնաւոր Իրաւագիտութեան պէս, բոլորովին գատ է կրօնային նկատողութիւններէ: Գա-

լով արիող գերդաստանին հնութեանը, ասիկայ ուրիշ բանի համար նկատողութեան չ'առնուիր եթէ ոչ կանոնաւորելու համար միապետական կառավարութիւններու միջև կարգը. և այսու հանդերձ ետ չի կենար յարուցանելէ ստէպ շատ մը ցեղագրական նեղացուցիչ խնդիրներ. վերջապէս հասարակագիտութիւններն ալ խոյս կու տան դասաւորութեան այս միջոցէն: Կառավարութեան ձևն ալ ազդեցութիւն չ'ունի կարգադրելու նախաթուութիւնը քանի որ Պետութեան մը պատիւը կախումն չ'ունի իւր մէկու կամ բազմաց կողմանէ կառավարուելէն: Վերջապէս, պէ՞տք է սրեմն որչափ տէրութեանց կարգը ըստ Տէրութիւններու ժողովրդոցը թուոյն: Ասիկայ ալ չ'են ընդունիր իրր նիւթական միջոց մը: Շատերը կրտսն որ նախաթուութիւնը պէտք է որ վերաբերի ամենէն քաղաքակրթեալ ազգին, և ամենէն քաղաքակրթեալ ազգը այն է որ ամենէն աւելի լուսաւորեալ, ամենէն աւելի վեհանձն և ամենէն աւելի հարուստն է սոցատական հաստատութիւններու մասին: Գործնականին մէջ, սովորութիւն է որ անուանական հաւասար պատիւ ունեցող իշխանները առաջնութիւնը տան անոր որ կու գայ զայնս այցելելու: Հաշտութեան Վեհաժողովներու մէջ նախաթուութիւնը կը վերաբերի միջնորդ պետութեան ներկայուցուցիչին, և երբ խնդիրը հանրային թուղթեր ստորագրելու վրայ է, դիւանագետները սովոր են փոխն ի փոխը կատարել այս գործողութիւնը տեղի չի տալու համար նախաթուութեան վէճերու:

Գեսպաններ. — Հարկաւոր է որ կառավարութիւնները բանակցին և հաղորդակցին միասին իրենց գործոցը համար, փոխադարձաբար իրարու նիւստելուն առաջըր աննրոյ համար, և իրենց վէճերը լուծելու համար: Բայց քանի որ դժուար է լուծել կարևոր խնդիրները լոկ թղթակցութիւններով, և քանի որ կառավարութեան պետերուն անձնական տեսակցութիւնները յապաղումներու և ծախքերու տեղի կու տան, սովորութիւն ըրեր են հաղորդակցելու հրահանգներով բեռնաւորեալ և լիակատար իշխանութեամբ օժտուած պատուիրակներու միջոցաւ, որք են դեսպանները:

Ազգաց — իրաւագիտական ոճով դեսպանագիտական այն գործակալն է զոր կառավարութիւն մը կը զրկէ օտար Պետութեան մը մօտ, կամ Վեհաժողովի մը, բանակցելու համար հանրային գործերու վրայ, և օժտուած գոյով յանձնարարադրելով (lettres de créance) կամ լիակատար իշխանութիւններով, կը վայելէ այն առանձնաշնորհումները զոր Ազգաց — իրաւագիտութիւնը կը շնորհէ իւր զգեցած հանրային հանգամանքին: Եւրոպիոյ Տէրութեանց Ազգաց Գրական Իրաւագիտութիւնը ներմուծած է դեսպաններու յատուկ շատ մը կարգեր որք իրարմէ կը զանազանուին իրենց վայելած փոխանորդութեան աստիճանովը և cérémonial սի: Ատոնք են դեսպաններ (ambassadeur), Եւրոպիական (légal kամ nonce), վեհապետաց մօտ հաստատուած (accrédité) նախարարներ (ministre) և արտաքին գործոց նախարարներուն մօտ հաստատուած (accredité) գործակատարներ (chargé d'affaires): Ընդունուած է նաև շորթորդ կարգ մըն ալ նախարարներու (ministre), որք դեսպաններէն (ambassadeur) անմիջապէս վերջը կու գան որք են յիստոր նախարարներ (ministre plénipotentiaire):

Բայց այս բազմատեսակ զանազանութիւնները նոր մուտ գտած են Ազգաց — իրաւագիտութեանը մէջ: Առջի ստեղծները միայն մէկ կարգ կար զոր կը կազմէին դեսպանները (ambassadeur), և նոյն իսկ, չին աւանները, պատգամաւորութիւնները (mission) տեական չ'էին, այլ առժամանակեայ, և միշտ որչափ նիւթ մը ունէին: Միայն Ժ. Ե. դարուն, մանաւանդ Ժ. Զ. դարուն մէջն էր որ, երբ արքունիքներու և դեսպաններու սնափառութիւնը աւելի դժուարացուց cérémonialը և դեսպանին փոխանորդութիւնը տարաւ մինչև վեհապետի մը աստիճանին, խորհեցան, դժուարութեանց և ծախքերու առջևը առնելոյ համար, գործածել ինչ ինչ առիթներու մէջ նուազ բարձր կարգի մը վերաբերեալ դեսպաններ: Իրաւագիրներուն շատերը դեսպաններուն միջև զանազանութիւնը կը հանգչեցնեն փոխանորդական հանգամանքին վրայ: Ըստ իրենց՝ առաջին կարգին դիւանագիտական գործակալները միայն պէտք է որ ունենան գերազանցապէս այս հանգամանքը. որովհետև ա-

սոնք կը ներկայացնեն, կրսեն, իրենց կառավարութեան պետը թէ անձին և թէ պատիւին տեսակէտով: Միւս կարգի դեսպանները զայն կը ներկայացնեն մի միայն յարաբերաբար այն գործերուն որոց համար իշխանութիւն ունին: Քայց շատեր ալ կըսեն որ ատի ցնորք մըն է զոր արգարացուցած է ժամանակին յառաջգիմութիւնը: Գեսպան (ambassadeur), պատգամաւոր (envoyé), գործակատար (chargé d'affaires) կամ երկրորդական դեսպան (résident), դիւանագիտական գործակալ մը մի միայն իւր ազգին շահերուն փոխանորդն է: Գեսպաններու միջև տարբերութեան բուն հիմը կը կայանայ փոխանորդութիւններուն զանազանութեանը մէջ: Այս գործակալներէն ոմանք հաստատուած (accrédité) են իրենց կառավարութեան պետին կողմանէ, օտար կառավարութեան պետին մօտ, և արտօնուած ուղղակի և անմիջապէս անոր հետ բանակցելու. ոմանք ալ մի միայն հաստատուած (accrédité) են իրենց երկրին արտաքին գործոց նախարարին կողմանէ միւս ազգին նախարարին մօտ:

Ամեն գերիշխան պետութիւն իրաւունք ունի դեսպաններ զրկելու և ընդունելու: Անոր արգելք ըլլալը անոր նախատիւք ընել ըսել է, յարձակիլ է անոր ամենէն թանկագին իրաւունքներէն միոյն վրայ, և, հետեւաբար, փաստ հասցնել Ազգաց — Իրաւունքին: Նմանապէս ամեն գերիշխան Պետութիւն իրաւունք ունի հաստատելու օտար դիւանագիտական գործակալներու ընդունելութեան պայմանները, և որոշելու անոնց տալիք իրաւունքներն ու առանձնաշնորհումները: Գալով կէս — գերիշխան Տէրութիւններու, անոնք որք ինքնիրենյմէ չ'են գործադրեր գերիշխանութիւնը, թէպէտ վարեալ են մասնաւոր և սեփական օրէնքով մը և օժտուած ներքին մասնաւոր վարչութեամբ մը, որպէս Զուլցերիական Գաշնակցութիւնը, չ'են կրնար դիւանագիտական գործակալներ հաստատել (accréditer), ուրիշ բան է եթէ մասնաւոր պայման մը գտնուի զայնս վարող հիմնական օրէնքին մէջ:

Յանձնարարագիր (lettre de créance) կըսեն այն գրութեանը որ կը վաւերէ և կը կարգէ դեսպանը իւր հանգամանքին մէջ օտար կառավարութեան մօտ: Ա-

տիկայ տեսակ մը ընդհանուր լիակատար իշխանութիւն մըն է որ սակայն իրաւունք չի տար գործակալին և ոչ մի մասնաւոր բանակցութեան: Յանձնարարագիրը կը խմբագրուի դիւանատուններու (chancellerie) մէջ գործածական ձևերու հետեղութեամբ կը յայտարարէ դեսպանութեան ընդհանուր նպատակը, և դեսպանին անունը և աստիճանը. այս թուղթը կը յանձնուի հրապարակային կամ մասնաւոր ունկնդրութեան մը պահուն, ըստ սովորութեան երկրին և պաշտօնական հանգամանքին անոր որ զայն կը կրէ: Գեսպանին ստորագասեալ պաշտօնեաները պէտք չունին իրենք ալ յանձնարարագիր ունենալու. արտաքին գործոց նախարարը զայնս ուղղակի կը հաստատէ (accréditer) իւր օտար երկրին պաշտօնակցին մօտ: Յանձնարարագրէն զատ, դեսպանը պէտք է օժտուած ըլլայ մի լիակատար իշխանութեամբ որն որ պարտի մասնաւոր ըլլալ երբ խնդիրը որոշեալ բանակցութեան մը վրայ է, այս պարագան որ կը ցուցնէ գործակալին պաշտօնին առարկան և սահմանները, կը կազմէ միայն հիմը անոր գործոցը վաւերականութեանը:

Lettres de rappel կամ հրաժեշտի րոշրեր կ'ըսուին այն գրութիւնները զորս դիւանագիտական գործակալները կը մատուցանեն պետին այն կառավարութեանը որուն մօտ հաստատուած են (accrédité) իրենց պաշտօնին թողած կամ իրենց հրաժարեցուցմանը պահուն:

Հրահանգք (Instructions) ներքէ հաստատող (accréditer) կառավարութեանը այն գաղտնի պատուէրները, այն հրամաններն են որոց դեսպանը պարտի համաձայնիլ: Ասոնք կրնան ըլլալ ընդհանուր և ցուցնել ամբողջութիւնը այն ընթացքին որոյ պէտք է հետեւիլ օտար կառավարութեան հանդէպ, կամ թէ մասնաւոր և վերաբերեալ միայն դեսպանութեան յատուկ առարկային: Գաղտնի թղթակցութիւնները երբեմն թուանշաններով (chiffre) կը կատարուին:

Ի բաց առեալ իրենց ազգին քաղաքական շահերը, զոր պաշտօն ունին ներկայացնելու և պաշտպանելու յանուն իրենց կառավարութեանը, դեսպանները պարտին տարածել իրենց հայրենակիցներուն վրայ պաշտպանութիւնը այն հեղինակութեան որոյ կը վերաբերին,



անոնց իրաւունքները ճանչցնել տալ երկրին դատարաններուն, և պահանջել, պէտք եղած ատեն, միջամտութիւնը այն իշխանութեան որոյ մտ հաստատուած են (accrédité): Ատկէ զատ, Եւրոպիոյ ամեն դատարաններու մէջ ընդհանուր կերպով ճանչցուած հանրային հանգամանք մը ունին վաւերելու թուղթեր, տալու վկայագրեր և վկայութիւններ: Օտար երկրի մէջ գիււանագիտական գործակալը իւր ազգին աստեակալն է, որուն գրութիւնները և ստորագրութիւնը ոյժ և վաւերականութիւն ունին:

Գեոպոլիտիկոսն առանձնաշնորհումները. — Գեոպոլիտիկոսն անձը անբաժանաբար է. իրենք անկախ են հեղինակութենէն այն Պետութեան ուր կը մնան. դատելի չ'են ոչ քաղաքային, և ոչ ալ եղեռնական դատարաններու առջին. ազատ են անձնական տուրքերէ: Գեոպոլիտիկոսները կը գտնուին Ալգայ — Իրաւունքին պաշտպանութեանը ներքեւ: Մանթիսթիէոյին ըսածին պէ՛տ՝ անոնք զիրենք զրկող վեհապետին խօսքը են, և այս խօսքը նուիրական է: Ո՛ր և է մէկը որ բռնաբարութիւն կընէ գեոպոլիտիկոս մը կամ ուրիշ ո՛ր և է գիււանագիտական գործակալի մը, ոչ միայն նախատինք մ'ըրած կ'ըլլայ այն Տէրութեան որոյ փոխանորդն է այն, այլ նաև վերաւորած կ'ըլլայ հասարակաց ասպնոթութիւնը և ազգաց փրկութիւնը. ինքզինքը ահաբեկի ոճրով մը մեղապարտ կացուցած կ'ըլլայ հանդէպ ամեն ազգի: Եւրոպիոյ Տէրութիւնները միաձայնութեամբ կը ճանչնան գեոպոլիտիկոսներուն անբաժանաբարելիութիւնը, ինչ որ ըլլայ անոնց աստիճանը, և անոնց կը շնորհեն այս անբաժանաբարելիութիւնը սկսեալ այն վայրկեանէն երբ ստբերնին կը դնեն հողին վրայ այն Տէրութեան որոյ առաջուց իմաց արուած է անոնց պաշտօնը: Ատկէ զատ, ազգաց տիեզերական սովորութիւնը գիււանագիտական գործակալներուն կուտայ կատարեալ անկախութիւն մը զբաւնուած Պետութեան իրաւասութենէն և հեղինակութենէն: Որով իրենք կը նկատուին այնպէս իբր թէ ձգած չ'ըլլային իրենց երկրեն հողը. այս պարագան այն է զոր կը նշանակին *Exterritorialité* բառով: Սակայն պէտք չ'է գեոպոլիտիկոս այդ անկախութիւնը շափազան-

ցել. այս անկախութիւնը զինքը ազատ չի կացուցաներ համակերպելու, իւր արտաքին գործքերուն մէջ, զբաւնուած երկրին սովորութեանցը և օրէնքներուն, այն ամեն բանին մէջ որ առնչութիւն չ'ունի ոչ իւր հանգամանքին և ոչ ալ իւր պաշտօնին հետ: Այս միւսայն գիտողութիւնը կը վերաբերի նաև անձերուն և նիւթերուն որոց կը տարածուի գիււանագիտական գործակալին անբաժանաբարելիութիւնը: Գեոպոլիտիկոսն ընտանիքը, հետևորդը, բնակարանը, կառքու ծառայքը, կարասիքը, իր անձին նման, անբաժանաբարելի են: Իւր գեոպոլիտիկոս թղթերուն ամենակարևոր հանգամանքը չի թոյլատրեր որ մօտը հաստատուած (accrédité) կառավարութիւնը ո՛ր և է պատրուակու մը՝ կարենայ առիթ ունենալ զայնս զբաւելու: Ուրեմն ընդհանրապէս ընդունուած է որ գեոպոլիտիկոսն ասպարանքը պարտի զերթ մնալ օտարականութեան և մաքսային խուզարկութիւններէն: Բայց եթէ գիււանագիտական գործակալ մը իւր անբաժանաբարելիութեանը ասպատանի փախցնելու համար ոճրագործ մը օրէնքին վրէժխնդրութենէն, կամ թէ նպաստելու համար մաքսանենգութեան, այսպէս անարգուած Տէրութեան կառավարութիւնը արտօնեալ է հարկաւոր եղած միջոցները ձեռք առնուլ հաշտեցնելու համար գեոպոլիտիկոսն հանգամանքին պարտաւոր յարգանքը օրէնքին պարտաւոր յարգանքին հետ: Այսպէս (asile) նախապաշարումը այլ ևս գոյութիւն չ'ունի ՚ի նպաստ գեոպոլիտիկոսն: Ծանրագոյն պարագայի մէջ՝ մարթ է ուրեմն խոհեմաբար խուզարկութիւն մը կատարել գեոպոլիտիկոսն մէջ և իւր սպասաւորացը վրայ, կանխաւ հրաւիրելով գեոպոլիտիկոսն պահելու իւր թղթերը, և արձանագրութիւնները: Քաղաքային և եղեռնային դատարաններուն անձեռն հաստութիւնը բացարձակ է հանդէպ գիււանագիտական գործակալներու, անոնց պաշտօնին կապուած անձերու, և կը տարածուի մինչև իսկ անոնց շարժուն ինչքերուն: Քաղաքային դատի մէջ բացառութիւն կայ միայն գեոպոլիտիկոսն անշարժ սեփականութեանց վերաբերեալ և մինչև իսկ շարժուն սեփականութեանց վերաբերեալ դատարան համար, որք առնչութիւն մը չ'ունին իւր օտար կառավարութեան մը ներկայացուցիչի հանգամանքին հետ: Գալով անձնական ուղղակի տուրքերուն ասպարա-

կութեան (exemption)՝ ասի ծագումն կ'անու գետական ներուճն և իրենց հետևորդացը անկախութենէն. բայց պարտաւոր են վճարելու կայունածական տուրքը այն կալուածներուն համար որոց տէր կրնան ըլլալ դեւանագիտի անունէն զատ ուրիշ ո՛ր և է անունով, և, ՚ի բաց առեալ յատուկ շնորհման պարագան, ենթարկուած են անուղղակի տուրքերու հասուցման:

Վախձան դիւանագիտական պաշտօններու. — Գիււանագիտական պաշտօնները կը վերջանան գետական յանձնարարագրերուն կամ իշխանութիւններուն շիջմամբը, ետ կանչուելովը, կամաւոր կամ բռնի հեռացուցմամբը և մահուամբը: Եթէ գործակալին պաշտօնը դադարեալ է, այս ընդմիջումը չի վերցնէր այն առանձնաշնորհումները որք կապուած են իւր հանրային հանգամանքին: Եթէ, ընդհակառակը, պաշտօնը կատարելապէս վերջացած է, գետականը իրաւունք ունի քաշուելու ազատօրէն, նոյն իսկ թշնամութեանց կամ անհամաձայնութեան պարագային մէջ, և վերագառնալու, յարմար պայմանաժամի մը մէջ, ինքը, իւր հետևորդներովը և իւր կարասեօքը, իւր սեփական հողին վրայ:

Հիւսպատոսները (Consuls). — Հիւսպատոսները գործակալներ են որք պաշտօն ունին ներկայացնելու օտար երկրի մէջ իրենց ազգին վաճառականական շահերը: Հիւսպատոսութիւնները հաստատուած են պաշտպանելու համար ազգայնոց վաճառականութիւնը և նաւարկութիւնը օտար կառավարութեանց մօտ, գործադրելու համար ոստիկանութիւնը և արգարութիւնը այս ազգայնոց վրայ, և հայթհայթելու համար կառավարութեան այն վաւերագրերը որք պարտին ի վիճակի դնել զինքը ապահովելու համար արտաքին վաճառականութիւնը: Հիւսպատոսները պարտին ուրեմն պաշտպանել և օգնել իրենց ազգին վաճառականներուն և նաւատիրներուն, հսկել գործադրութեանը վաճառականական դաշնագրերուն և տեղեկագրել իրենց կառավարութեան այն ամենը որ կը վերաբերի ազգային վաճառականութեան վիճակին և շահուն հանդէպ իրենց հիւսպատոսարանին գրտնուած երկրին: Այս պաշտօնութեան կազմաւորութիւնը

չատ հին է: Կանուխէն մասնաւոր դատաւորներ հաստատուած էին Իտալիոյ և Սպանիոյ մէջ, վաճառականութեան և նաւարկութեան վերաբերեալ գործոց համար: 1490ին, Կիլ, Երուսաղիմայ թագաւորը, թոյլ տուած էր Մարտիլիոյ վաճառականներուն իւր վիճակներուն մէջ հիւսպատոսներ կարգելու որք իշխանութիւն ունէին զատելու իրենց և օտարաց միջև ծագած ամեն վէճերը, ի բացառեալ գողութիւնը, մարդասպանութիւնը, մասնութիւնը, զրամանենգութիւնը և առեւանգումը: ԺԳ. դարէն ի վեր, Եւրոպիոյ մի քանի Պետութիւնք սկսան իրարու հիւսպատոս զրկելու իրաւունքը տալ ինքնիրենց: Այս սովորութիւնը ընդհանրացաւ ԺՁդ. դարուն մէջ: Հիւսպատոսական պաշտօնները կը բաժնուին ընդհանուր հիւսպատոսաշիններու (Consulat général), հիւսպատոսաշիններու (consulat), փոխ - հիւսպատոսաշիններու (Vice - consulat) և հիւսպատոսական գործակալներու (Agent consulaire): Հիւսպատոսական մարմնոյն արգիւլեալ է զբաղել ո՛ր և է վաճառականութեամբ, ուղղակի կամ անուղղակի, պաշտօնանկ ըլլալու պատժոյն ենթարկուելով հակառակ պարագային: Սակայն այս արգելումէն ազատ են պատռակալ հիւսպատոսները (consul honoraire):

Շատ ազգերուն ընդհանուր սովորութեանը հիւսպատոսները արտօնեալ են իրենց ազգայիններուն անցագիր տալու, վաւերացնելու իրենց շրջանակին հանրային պաշտօնէից կողմանէ խմբագրուած պաշտօնաթուղթերը, կատարելու քաղաքային արձանագրողի պաշտօնը: Իրաւարարի պաշտօնն ալ կը կատարեն իրենց ազգին հպատակներուն միջև, և ասոնց և երկրին բնակչացը միջև ծագած դժուարութեանցը մասին: Վաճառականական նաւականութեան հետ իրենց ունեցած յարաբերութեանցը մէջ, ոստիկանութիւն կը գործադրեն իրենց երկրին վաճառականական նաւերուն վրայ, իրենց իրաւասութեանը մէջ գտնուող ամեն նաւահանգիստներուն մէջ. բայց պարտին յարգել իրաւունքները նաւահանգիստին ոստիկանութիւնը վարող տեղական իշխանութեան: Պաշտօն ունին հսկելու քրինական և կանոնաւոր գործածմանը իրենց Տէրութեան դրօշին և իմաց տալու այն զեղծումները որք կրնան տեղի ունենալ այդ մասին:

Պաշտօն ունին նաև բարեխօսելու ի նպաստ իրենց ազգայնոց որք ձեռքակալուած են տեղական իշխանութիւններուն կողմանէ, և կատարելու պէտք եղած ձեռնարկները որպէս զի անոնց հետ վարուին մարդասիրութեամբ, պաշտպանուին և դատուին անկողմնակալութեամբ: Իրենց ղինուորական նաւականութեան հետ ունեցած յարաբերութիւններուն մէջ, կարող են միջնորդել տեղական կառավարութեանց մօտ հետապնդել տալու և ձեռնարկել տալու համար պատերազմական նաւերու դասալիքները. և, այն պարագաներուն մէջ ուր վտանգ կայ իրենց ազգայիններուն անձին ապահովութեանը կամ ընչիցը պաշտպանութեանը մասին, իրաւունք ունին կոչուիմ ընելու ծովային զորութեանց որք կը զանուին նաւահանգստին մէջ կամ քիչ մը հեռուն:

Հիւպատոսները իրենց ազգին վաճառականութեանը ներկայացուցիչներն են. պաշտօն ունին իրենց կառավարութեանը կողմանէ պաշտպանելու օտար երկիր մէջ ոչ միայն անհատից շահերը, այլ ստէպ նոյն ինքն Տէրութեան շահերը: Ասկէ զատ մերթ ընդ մերթ կը պատահի որ առ ի չգոյէ գիււանագիտական գործակալներու պաշտօն ունին րօնակցելու Ազգաց — Իրաւագիտութեանը վերաբերեալ խնդիրներու վրայ:

Գեսպաններուն պէս, հիւպատոսներն ալ պէտք է որ հաճութեամբ ընդունուած (այրէժ) ըլլան այն կառավարութեան որոյ մօտ պարտին ի կիր աւելու իրենց կարևոր պաշտօնը: Այսինքն թէ գեսպան մը կամ հիւպատոս մը պաշտօնապէս անուանելէ առաջ հարկ է կանխաւ հաճութիւնը (agrément) ըստանալ այն կառավարութեան որոյ մօտ պիտի զրկուի:

Ազգաց մասնաւոր իրաւագիտութիւն. — Օտարականները. — Կառավարութիւնը չի պարտիր միայն քաղաքավարութիւն գործածել միւս տէրութեանց հետ իւր ունեցած պաշտօնական յարաբերութիւններուն մէջ, և գործադրել տալ այն յարգանքը զոր անոնց կը պարտի, հիւրասիրութիւնը իրեն օրէնք կը դնէ տարածելու նաև իւր պաշտպանութիւնը այն օտարականներուն վրայ որք կ'այցելեն իւր հողը: Այս հիւրերը՝ կամ զբօսաչրջիկներ են որք կը ճամբորդեն իրենց զարգացմանը և հաճոյիցը

համար, կամ անհատներ են որք օտար երկիր կոչուած են իրենց գործերուն համար, կամ պանդուխտներ (immigrant) որք կուզան փնտռելու նոր հայրենիք մը և ազգութիւննին փոխելու, գաղթականներ (émigré), վերտարանդիներ (banni) կամ տարագրական (réfugié) ներ: Գաղթականները (émigré) անոնք են որք խոյս կուտան վտանգէ մը որոյ պատճառը քաղաքական է: Վտարանդիները (banni) իրենց երկրէն արտաքսուած անհատներ են՝ դատական դատապարտութեամբ մը կամ կառավարութեան որոշումով մը: Ընդհանրապէս տարագրականները անոնք են որք օձիքնին կ'ազատեն խոյս ստալով քաղաքական անմիջական հալածանքէ մը: Շատ ստէպ ալ ատոնք ոճրագործներ են որք զաղտնի կը փախչին իրենց ազգին պատժական օրինացը գործադրութեանէն:

Եւրոպական Տէրութիւններուն մէջ զանազան ազգերու հողին վրայ ազատ է մուտքը ամենուրեք՝ անոր որ թշնամի չ'է Տէրութեան: Սակայն այն քաղաքակրթութեանը զոր մէջ մի ազգ ունի իւր հողին վրայ՝ կարտօնէ զինքը փակելու անոր մուտքը օտարաց, և հետեւաբար՝ տալու անցք կամ օթեան միայն անոնց՝ որք մասնաւոր արտօնութիւն մը ստացած են առ այդ: Եւրոպիոյ Տէրութիւններէն շատերուն հողին վրայ և ոչ մի օտարական դաք կրնայ կոխել եթէ չ'ունի անցազիր մը իրեն պատկանած իշխանութենէն տրուած, անցազիր մը վաւերագրուած (visé) Տէրութեան գիււանագիտական գործակալին, գեսպանին, կամ հիւպատոսին կողմանէ: Մուտքի, անցքի և օթեանի այս ազատութիւնը զոր քաղաքակրթուած ազգերը կը շնորհեն ինչ ինչ պայմաններով, հաստատուած է շատ մը դաշնագրերով, և առ ի չգոյէ դաշնագրերու, այդ ազատութիւնը կը հանգչի ընդհանուր կերպով ճանչցուած սովորութեան մը վրայ: Գալով զօրագունդերու անցքին օտար հողի մը վրայէն, ասի ենթարկուած է կանխազոյն արտօնութեան մը: Միևնոյն բանը նաև պատերազմական նաւերու մուտքին համար. պէտք է մասնաւոր արտօնութիւն մը կամ դաշնագիր մը, և դաշնագրերուն մէջ սովորութիւն է որոշել անոնց թիւը:

Օտարականը ենթարկուած է իր ճամբորդած երկրին

ոստիկանութեանը և ապա հովութեանը վերաբերեալ օրէնքներուն, այսինքն այն օրէնքներուն որք պարտականութիւններու կը հարկադրեն պաշտպանելու ընդհանրապէս քաղաքացիներուն անդորրութիւնը, ազատութիւնը, սեփականութիւնը, առողջապահութիւնը և ապահովութիւնը: Անկարելի պիտի ըլլար կարգապահութիւնը տիրել տալ երկրի մը մէջ, եթէ օտարականները կարողանային զայն խանգարել արձակ համարձակ և անպատիժ կերպով: Արդէն հազիւ թէ կ'ընդունուին կ'իյնան պաշտպանութեանը տակը օրինացը և կառավարութեանը այն երկրին որ իրենց ասանջականութիւն կուտայ. ուրեմն անոնց հնազանդութիւն կը պարտին: Երկրին օրէնքին պէտք է որ հնազանդին ամեն անոնք որք կը գտնուին կամ կուզան ինքզինքնին դնելու, նոյն իսկ առժամանակեայ կերպով, անոր պաշտպանութեանը ներքեւ: Այս օրէնքն է նոյնպէս որ պարտի կանոնաւորել այն անշարժ ինչքերը որոց օտարականները տէր եղած են՝ իրենց հայրենիքէն դուրս: Ազգ մը միւս ազգերէն անկախ եղած չ'ըլլար և կատարեալ գերիշխանութիւն մը ունեցած չ'ըլլար, եթէ իւր հողէն ո՛ր և է մաս մը ենթարկուած ըլլայ օտար կառավարութեան մը օրէնքին: Օտարներուն անշարժ ինչքերը ենթարկուած են այն միևնոյն տուրքերուն որոց ենթարկուած են ազգայինները, և զալով այն տուրքերուն որք կը ծանրանան անձի կամ կարասեաց վրայ, ատոնք ընդհանրապէս կը պահանջուին օտարներէն այն ատեն միայն երբ իրենց ներկայութիւնը տեւական հաստատութեան մը հանգամանքը կ'զգենու: Եթէ արգար է, այս սահմաններուն մէջ, տուրք գնել օտարականաց վրայ այնու համար որ կառավարութեան առիթ տուած ծախքերը պարտին կրել անոնք որք կ'օգտուին անոր օրէնքներուն և կանոններուն առաւելութիւններէն, բայց ասոր հակառակն ալ և ոչ մի բան կ'արգարացնէ այն անօրինութիւնը որ զօտար, ներք ազգայիններէն շատ աւելի զօրաւոր տուրքերու կ'ենթարկէ: Օտարականները, վերջապէս, պէտք է որ ունենան յաջորդելու, տրամադրելու և ընդունելու իրաւունքը այն միևնոյն եզանակու որպէս ազգայինները: Գալով իրենց անձնական վիճակին, այսինքն ընկերութեան մէջ իրենց դիրքին և ինչ ինչ գործեր ընելու ի:

րենց կարողութեանը, ատի ուրիշ բանով չի կառավարուիր եթէ ոչ իրենց երկրեն օրէնքովը: Անձնական օրուները կը կապուին, կը տնայն, անձին և կը հետեւին անոր ուր որ ինքը պատշաճ դատի բնակել:

Պայմանագրերու վրայի փոտահութիւնը տեղէն խախտած պիտի ըլլար և քաղաքային կամ վաճառականական գործերու յարաբերութիւնները շատ պիտի դժուարանային, եթէ ազգայինները ենթարկուած ըլլային հետապնդելու՝ դատական եղանակաւ՝ իրենց երկրէն դուրս օտարականներու կողմանէ իրենց հանդէպ կ'ընքուած պարտականութիւններուն գործադրութիւնը: Ուրեմն պարտաւորեալ չ'են դիմելու իրենց պարտականին, այլ իրենց դատը պիտի ներկայացնեն իրենց ազգային դատարաններուն:

Տէրութեանց անկախութեան ըսկզբունքը կը հակառակի այնու որ կառավարութեան մը պարտաւորուած ըլլայ գործադրելու օտար երկրի մը մէջ արձակուած վճիռ մը այն անձերուն վրայ կամ այն ինչքերուն վրայ որք իւր սահմաններուն մէջ կը գտնուին: Ապաքէն վճիռի մը գործադրութիւնը հանրային իշխանութեանը մէջ գործ է: Սակայն, բարեկամութեան յարաբերութիւնները և փոխադարձ օգտակարութեան և պատշաճութեան նկատողութիւնները ընդունել տուած են բացառութիւններ այն կանոնին ըստ որում վճիռները չ'են կրնար գործադրուիր օտար Պետութեան մը մէջ: Այս բացառութիւնները հաստատուած են մերթ ազգէ ազգ եղած զաշնագրերու մէջ, մերթ Պետութեան մը օրէնքներովը որք կը նուիրագործեն փոխադարձութեան ըսկզբունքը, մերթ պարզ սովորութեամբ: Բայց և ոչ մի Տէրութիւն հաւանած է թոյլ տալու որ, իւր հողին վրայ, օտար վճույ մը գործադրութիւնը կատարուի մի միայն զայն առող գատաւորին հեղինակութեանը գորութեամբը. ամենարեք Տէրութիւնը վերապահած է իւր սեփական դատաւորներուն այդ գործադրութիւնը հրամայելու իշխանութիւնը, քննելէ յետոյ թէ այդ վճիռը չի պարունակեր արամագրութիւն մը հակառակ կամ գերիշխանութեանը ազգին որոյ հողին վրայ գործադրութիւնը պարտի տեղի ունենալ, կամ այս ազգին շահերուն, կամ վերջապէս միևնոյն Պետութեանը հանրային իրաւունքին:

Թո՛ղ Տէրութեան մը օրէնքները առաւել կամ նուազ պայմաններու ենթարկեն օտարականը որ կը խնդրէ իւր ազգութիւնը փոխել, թո՛ղ ներողամիտ գտնուին հանդէպ ազգայինին որ, կորսնցուցած ըլլալով իւր քաղաքացիութեան հանգամանքը իւր վերահաստատութիւնը (réintégration) կը հայցէ, և նըպաստաւոր գտնուին ազգայինին օտար երկրի մէջ պատահմամբ ծնած գաւակին. թո՛ղ ենթարկեն քաղաքական իրաւունքներուն վայելու մը, ազգափոխութիւնը (naturalisation) ըստանալէ վերջը, այս ինչ կամ այն ինչ պայմաններուն կատարմանը, ասոնք կէտեր են որք թողուած են մէն մի ժողովրդեան դրական օրէնքին, որն որ, ըստ իւր ներշնչումներուն, շահերուն կամ պէտքերուն, կրնայ պարզեւել կամ մերժել քաղաքացիութեան իրաւունքը (Droit de cité): Սակայն ընդհանրապէս ընդունուած է որ ազգափոխութիւնը (naturalisation), և նոյն իսկ երկարեալ բնակութիւն մը (résidence prolongée); իբր արդիւնք ունին գօտարները ազգայիններուն նմանցնելու (assimiler) որք, այս պարագային մէջ, կը նայուին իբր հըպոտակները այն Պետութեան որոյ հողին վրայ հաստատուած են: Բայց շահեկան խնդիր մըն է զիտնալը թէ կառավարութիւն մը կրնայ սեղմունքներով շրջապատել օտար երկրի մը մէջ իւր ազգայիններուն ազգափոխութիւնը (naturalisation), և հակառակիլ գաղթականութեան (émigration): «Օրէնք մը որ, կըսէ հռչակաւոր խալաջի օրէնագէտն Պէքքարիա, կը փորձէ խելու քաղաքացիներէն իրենց երկիրը թողու ազատութիւնը, փուճ օրէնք մըն է. որով հետեւ, քանի որ անմատչելի ժայռեր կամ անանցելի պարիսպներ չ'են անջատեր այդ երկիրը միւս բոլոր երկրներէն, ինչպէս պահելիւր շրջափոխին ամեն կէտերը:» Գաղթականութիւնը (émigration) միշտ կը ցուցնէ խորին նեղութիւն մը այն ընկերութեան գրկին մէջ ուր 'ի յայտ կուգայ: Արպէս զի մարդ մը մերժէ իւր հայրենիքը որոյ բնակաւորար յարած է մանկութեանը առաջին սպաւորութիւններուն բերմամբ կը ցուցնէ ընդհանրապէս որ կարող չ'է զարգացնել հայրենի հողին վրայ իւր ֆիզիքական և բարոյական կարողութիւնները: Գաղթականութեան առջևը սունելու լուռագայն միջոցը, խոհեմ դրութիւններով, ժողովրդոց բա-

րեկեցութիւնը ապահովելը զիտնալուն մէջ կը կայանայ կըսեն:

Հիւրասիրութեան պարտքերը պարտին համաձայնիլ այն զգուշութիւններուն հետ զորս կը պատուիրէ խոհեմութիւնը հանդէպ տարագրականներուն (réfugié): Մինչև իսկ պէտք է զանազանել թէ արդե՞օք այս անհատները քաղաքական տարագրականներ (réfugié) են թէ ոչ: Ստոյգ է որ, ի բաց առեալ բացայայտ դաշնագրի մը պարագան, քաղաքական տարագրականները (réfugié) բնաւ չ'են կրնար յանձնուիլ զայնս պահանջող կառավարութեան: Ստոնք կը գտնուին Ազգաց - Իրաւունքին պաշտպանութեանը ներքև: Սակայն, ըստ պարագաներու, կառավարութիւնը իրաւունք ունի զայնս գումարելու քաղքի մը մէջ, և երբ վտանգաւոր դառնան հասարակաց անդորրութեանը կարող է զայնս դուրս հանել տալ իւր հողէն: Այս խիստ միջոցը, կրնայ, սակայն, զործադրելի ըլլալ այն ոչ - տարագրական օտարներու որք կը խանգարեն ազգայիններուն ապահովութիւնը: Այդպէս է ահա որ վարչական հեղինակութիւնը միշտ իրաւունք ունի արտաքսելու թափառական օտարականները:

Այստայանձնաքիւնը (Extradition) այն զործողութիւնն է որով կառավարութիւն մը կը յանձնէ ուրիշ կառավարութեան մը — որ զայն կը պահանջէ զատելու համար — անհատ մը որ ամբաստանուած է ոճիրով մը կամ յանցանքով: Իրաւագիրներէն ոմանք զայն ստիպողական կը նկատեն, նոյն իսկ ատանց գոյութեան մասնաւոր պայմանադրութեան մը: Աւրիշներ ալ, ընդհակառակը, կը պնդեն որ յատուկ պայմանադրութիւն մը անհրաժեշտ է որպէս զի Տէրութիւն մը պարտաւորուի հաւանիլ մէկ ուրիշ Տէրութեան կողմանէ իրմէ խնդրուած արտայանձնութեան (extradition): Այս մասին ընդհանուր սովորութիւն մը չիկայ ազգերուն միջև, որ կազմէ կատարեալ պարտականութիւն մը և ունենայ բուն Միջազգային Իրաւունքի մը զօրութիւնը: Ընդհանր կերպով ընդունուած սկզբունքը սա է որ ամեն արտայանձնաքիւնը (extradition) ենթարկուած լիւնելով փոխադարձ պատշաճութեան և զգտակորութեան

նկատողութիւններուն, կառավարութիւնները պարտաւոր չ'են շնորհելու յանցաւորի մը արտայանձնութիւնը, ուրիշ բան է եթէ երկու Տէրութեանց միջև այդ մասին գոյութիւն ունենան բացայայտ դաշնագրեր: Միայն թէ նուազ դիւրութեամբ հաւանութիւն կը ստացուի քաղաքացիի կամ հպատակի մը քան թէ օտարականի մը արտայանձնութեանը համար, և շատ մը Տէրութիւններու օրէնքները յատկապէս կ'արդելուն տեղացիներուն արտայանձնութիւնը: Վերջապէս, արտայանձնութիւնը տեղի կունենայ մի միայն 'ի վնաս հասարակ ոճիրներով մեղադրուած անհատներու, այսինքն ամեն երկիրներու օրէնքներուն պատժելի նկատուած օրինազանցութիւններով մեղադրուած անհատներու: Եւրոպիոյ կառավարութիւններուն կողմանէ ընդհանրապէս ընդունուած է որ արտայանձնութիւնը պարտի տեղի ունենալ ոչ քաղաքական յանցանքներու համար և ոչ ալ թեթև կամ լոկ տեղական յանցանքներու համար:

Այս կանոններուն և այս ըսկզբանքներուն կատարումը, որոց վրայ կը հանգչի ազգերու ներդաշնակութիւնը, կը ստեղծէ՝ հաւաքական և անկտիւ էակ եղող Տէրութիւնը ներկայացնող կառավարութեանը համար՝ կարգ մը իրաւունքներ և պարտքեր որք կը հայցեն անոր կատարեալ գործունէութիւնը, և կը պահանջեն անոր կողմանէ արագ, խելացի և անդիմադրելի գործողութիւն մը:

Պատերազ մի պահուն՝ ազգաց միջև եղած յարաբերութիւնները. — Շատ գրուած է պատերազմի վրայ: Իրաւագիրներ եղած են որ զայն նըկատած են միջոց մը քաղաքակրթութեան. իմաստասէրներ ալ եղած են որ զայն նկատած են իբր պատուհաս մը: Ոմանք զայն կը գովեն իբր օգտակար մարդանք մը վառ պոհելու համար արիութիւնը և տռչելու առնելոյ համար բարոյից ապականութեանը. ոմանք ալ զայն կ'ընդունին իբր անհրաժեշտ հետեանք ընկերային կեանքին: Ինչ որ ալ ըլլայ, ժողովրդոց պատմութիւնը կարծես կ'արգարացնէ չափէն աւելի Տը Մէթրի դառն տեսութիւնը: «Պատմութիւնը կ'ապացուցանէ որ, կըսէ փնտառի իմաստասէրը, պատերազմը կերպիւ իւրիք մարդկային ազգին սովորական վիճակն է, այսինքն թէ մարդկային արիւնը

պէտք է որ հօսի առանց ընդհատման երկրագնդիս վրայ, հօս կամ հօն, և թէ խաղաղութիւնը, ամեն ազգի համար, ուրիշ բան չ'է եթէ ոչ դադար մը:»

Գարուս իրաւագիրներէն մէկը պատերազմը սապէս սահմանած է՝ քչնամիկն ոյժերը անդամաւորուած արուեստը: Նախնիք անդամաւորուած գիտուն բառին տեղ աւելի զազանային եղող կործանել բառը դրած էին: Կործանում, ահա այս էր նախնի պատերազմին ըսկըգրուենքը: Երբ ժողովուրդ մը ամենէն զօրաւորը չ'էր, պէտք էր որ մեռներ: Քրիստոնէութիւնը զօրաւորապէս ամբընց այս խտութիւնները: «Մէկ կողմանէ աչքերնուս առջև բերենք, ըսած է Մօնթէսքիէօ, յոյն և հռովմայեցի թագաւորաց և պետերուն անընդհատ ջարդերը, և, միւս կողմանէ, ժողովրդոց և քաղաքաց կործանումը այս միւսոյն պետերուն՝ Թիմուրի և Ճէնկ իլխանի կողմանէ, որք քանդեցին զԱսիան, և պիտի տեսնենք որ, Քրիստոնէութեան կը պարտինք պատերազմի մէջ

Ազգաց — Իրաւունքի պէս բան մը զօր մարդկային բնութիւնը ճանչնալէ ուրիշ բան չի կրնար ընել: Ատի Ազգաց այս իրաւունքին շնորհիւն է որ, 'ի մեզ, յաղթութիւնը կը թողու յաղթուած ժողովրդոց սա մեծ բաները՝ կեանք, ազատութիւն, օրէնք, ինչք և միշտ կրօնք:» Քրիստոնէութենէն վերջը, թնդանօթի վառօդին գիւտը, նորանոր զէնքերու մուտքը որը մահ կը պատճառեն հեռուէն ալ, ներկայ սաղմագիտութեան մեծախորհուրդ կենճիւնները, պատերազմին նուազ բարբարոս գիմագիծ մը տուին, և անկէ 'ի վեր պատերազմներու յաջողութիւնը սկսաւ կախումն ունենալ ոչ թէ պատերազմողներու բազմութենէն, այլ գորավարին վարպետութենէն: Այս իրական յառաջագիմութիւններուն առջև մարդասիրութեան բարեկամները կրնան յուսալ որ աւելի յառաջացեալ գաղափարաց յաղթանակը ճանչցնել պիտի տայ նոր Ազգաց — Իրաւունք մը, և քանի մը ազգեր, աւելի լաւ լուսաւորուած, պիտի զբանեն պատերազմելու շատ աւելի քաղաքակրթիչ միջոց մը զօր կը կազմեն գիտութեանց և ազատ արուեստից մարի նախանձը, ճարտարութեամբ և խելացի վաճառականութեամբ փայլելու փախաքը:

Պէյքըն (Պաքօն) զիւանապետը կըսեր՝ «Ազգի մը

մեծութեանը համար օգտակար է որ գրեթէ միշտ զինեալ գտնուի, և թէպէտ շատի կը նստի մշտնջենաւորապէս պատրաստ բանակ մը ունենալը, սակայն ատով է որ Տէրութիւն մը իրաւարար կ'ըլլայ իւր դրացիներուն:»  
 Դարուս փիլիսոփաներէն մէկը աւելի առաջ գտած է. ըստ իրեն, պատերազմը բնական է և ընկերային, երբ բուն յարձակողական է, կը զարգացնէ աշխարհքիս քաղաքակրթութիւնը. առի զինեալ ձեռք համոզումն է:

Մօնթէսքիէօ, ինչպէս որ ըսինք առաջները, կատարեալ կերպով մը որոշած է պատերազմ ընելու իրաւունքին սահմանները, ըսելով որ՝ «Տէրութեանց կեանքը մարդկան կեանքիս պէս է: Ասոնք իրաւունք ունին ըսպաններու բնական պաշտպանութեան պարագային մէջ, անոնք իրաւունք ունին պատերազմ ընելու իրենց սեփական պաշպանութեանը համար:»

Դարուս մեծ իրաւագէտներէն մէկն ալ սա հետեւեալ մարդարէութիւնը ըրած է 1869ին զոր աստիճան մը կատարեցաւ Վահէի Խաղաղութեան Գեոպանախորհուրդին՝ գումարտնելովը՝ «Եթէ, ինչպէս որչափ անգամ, առաջարկուած է, և ինչպէս որ անպաշտ պայմանի տայ թերեւս, քաղաքակրթեալ տէրութիւնները համաձայնէին հաստատելու Ազգաց — Իրաւունքի գերագոյն դատարան մը՝ որոյ առաջ դատելի ըլլային կառավարութիւնները և ժողովուրդները, և որ պաշտօն ունենար, ազգերու միաձայն համամիտութեամբը, Միջազգային իրաւագիտութեանը պաշտպանութեանը ներքեւ, դատելու Պետութեանց միջև, որպէս մէն մի ժողովուրդեան գատարանները կը դատեն մասնաւորաց միջև, այլ ևս բնաւ պաշտպանողական պատերազմներու տեղի չ'էր մնար: Գալով աշխարհակալութեան պատերազմներուն, ասոնք պիտի պատժուին այն ատեն իրր ոճիրներ ընդդէմ՝ քաղաքակրթութեան:»

Պատերազմին տեսութիւնը կը բաղկանայ երկու հիմնական կանոններէ՝ Ա. պատերազմը պէտք է որ կայանայ անգամալուծելուն մէջ թշնամուայ ոյժերը, այսինքն թէ ջանալ զայն մեզ վնասելէ արգելուլ, կամ անոր բա-

1. Գումարեալ 1899 ասրւայն մէջ Ռուսիոյ Նիքօլա Բ. կայսեր նախաձեռնութեամբը:

նակը կազմող մարդիկը պատերազմելու անկարող վիճակի մը ենթարկել, կամ անոր անօգտակար կացուցանելով մթերքը և զրկելով զայն գոյութիւնը ապահովող միջոցներէն. Բ. պատերազմները չ'են ըլլար ազգէ յազգ, այլ կառավարութեան ի կառավարութեան:

*Rétorsion. — Représailles.* — Իրաւագիրները Գիւմարտնաշին (rétorsion) անունը կուտան այն միջոցներուն որք կը ձգտին ընելու՝ այն կառավարութեան որ մեզ վնաս հասուցած է՝ մեզի ըրած վնասին համարժէք վնաս մը: Գիւմարտնութեան (rétorsion) իրաւունքին գործածումը կ'ենթադրէ որ արդարասիրութեան, մարդասիրութեան, միջազգային քաղաքավարութեան պարօքերը վիրաւորուած են ազգի մը կողմանէ հանդէպ միաներուն. նպատակն է հրաւիրել, փոխադարձութեամբ, նախատող ազգը փոխելու իւր ընթացքը:

Փոխարէն վնասի կամ վրիժառնքեան (Représailles) տեղի կայ, երբ ազգ մը թերանայ իւր դրական պարտականութիւններուն մէջ, և վիրաւորէ արիւ ազգի մը ըստացեալ իրաւունքները: Փոխարէն վնասը ընդհանրապէս բնութիւն մըն է. կը կայանայ գրաւմանը մէջ այն նիւթերուն որք վիճակեալ են գրաւականի սեղ ծառայելու համար մինչև որ արուի սզուած գոհացումը բայց կրնայ նաև յայտնուիլ փոխադարձութեամբ կրնաքուած պարտականութիւններուն բռնարարութեանը մէջ: Թէպէտև զիւմարտնութեան (rétorsion) և վրիժառութեան (représailles) գործողութիւնները պատերազմ չ'են, և թէ կարելի է զայնա կատրել խաղաղութեան մէջ ըլլալով հանդերձ այն կառավարութեան հետ որոյ դէմ զայնա կը գործածեն, սակայն թշնամութեան հտնգամանք մը ունին որն որ պարտի սահմանուած ըլլալ նախընթաց երկու հիմնական կանոններով:

Պատերազմի հրատարակութեան. (Déclaration de guerre). — Պատերազմ ընելու իրաւունքին մէջ պէտք է գանազանել երկու բան զորս իրաւագիրները շիտթած են ընդհանրապէս՝ որոշումը (décision) և հրատարակութեան (déclaration): Պատերազմը որոշելը՝ անոր ձեռնարկելը միաքը դնել ըսել է: Այդպիսի մտադրու-

Թիւն մը՝ քաղաքացիներուն համար վտանգաւոր պարտաքեր ստեղծելով և ծանրաբեռնելով զիրենք դրամի և արեան տուրքերով, պարտի վերաբերիլ օրէնսդիր իշխանութեան: Քացարձակ կառավարութեանց մէջ Տէրութեան Պետն է որ կ'որոշէ պատերազմը, որովհետև տէր լինելով տրամադրելու իւր հպատակներուն, ստացուածքը և կեանքը, կը միացնէ իւր ձեռքերուն մէջ թէ օրէնսդիր և թէ գործադիր իշխանութիւնները. բայց այն երկիրներուն մէջ յորս կառավարութեան ձեռք ընդունած է երկու իշխանութիւններուն անջատումը, օրէնսդիր իշխանութիւնը յանձնուած ըլլալով ժողովրդեան փոխանորդներուն, պատերազմը որոշելու իրաւունքը ազգն է որ կը գործածէ: Գալով պատերազմին հրատարակութեանը, առի ուրիշ բան չ'է եթէ ոչ որոշման գործադրութիւնը. հետևաբար առի գործադիր իշխանութեան պետին կը վերաբերի, իբր մասն այս իշխանութեան իրաւունքներուն: Ատեն մը պատերազմը այն տտեն միայն օրինաւոր էր երբ հանդիսաւորապէս հրատարակուեր: Մինչև ժ.կ. դարը հրատարակութիւնը կը կատարուեր պատգամաւորներու միջոցաւ (héralds d'armes): Այս սովորութիւնը անյայտացու. սակայն պատերազմին հրատարակութիւնը Անգղիոյ մէջ սովորաբար մինչև հիմայ փոքր ինչ հանդիսաւորութեամբ տեղի կունենայ: Այժմեայ սովորութեամբ՝ պատերազմը կը հրատարակուի յայտարարութիւններու և անոր տեղի տուող պատճառներուն հրատարակութեամբը, որք յետոյ կը հաղորդուին օտար զանազան արքունիքներուն: Բայց այս կերպ գործելու համար անհրաժեշտ հարկաւորութիւն չիկայ: Յայտարարութիւններու հրատարակութեանը նպատակն է իմաց տալու ազգայիններուն, և պատճառներուն պարզումն ու՛ միւս տէրութիւնները գատաւոր կացուցանելու արդարութեանը այդ պատճառներուն որք որոշել կուտան պատերազմը, հրաւիրելով իրենց ուշադրութիւնը այն վտանգներուն վրայ որոց բաղձալի է առջևը առնուլ: Օգտակար միապետական բացարձակ կառավարութեանց մէջ, որոց մէջ պատերազմը խորհրդակցութեանց կ'ենթարկուի գաղտնի ժողովներու մէջ, յայտարարութիւններու հրատարակութեանը տեղը բռնած է ազատամտութեամբ կառավարուած երկիրներու մէջ՝

հրատարակութիւնը որ կ'ընկերանայ, սովորաբար, կառավարութեան գործերուն:

Պատերազմի հրատարակութեանը ընդհանրապէս կը հետևի նաւարգեկըր (embargo) և կոչական (avocatoire), յորդորական (déhortoire) և արգելական (inhibitoire) թուղթերը:

Նաւարգեկըր (embargo) արգելքն է որ կը դրուի վաճառականական նաւերուն ելնելու կամ մտնելու նաւահանգիստներէն, առ նուազն ժամանակի մը համար: Նաւարգեկը մը դնել՝ նաւահանգիստները գոցել ըսել է: Այս փակումը գերի կը բռնէ թշնամի տէրութեան վաճառականական նաւերը կամ թէ կ'արգելու գայնա շարունակելու իրենց վաճառականական յարաբերութիւնները: Սակայն եւրոպական Տէրութեանց սովորութիւնը արդէն փոխած է նաւարգեկըին անիրաւ հետևանքները: Ապաքէն ընդհանրապէս պայման դրուած է վաճառականական գաշնագրերուն մէջ թէ թշնամիին նաւերը որք պիտի գտնուին պատերազմող Տէրութիւններուն մէջ խզման պահուն, և անոնք իսկ որք պիտի մտնեն յետոյ թշնամուոյն նաւահանգիստներուն մէջ մինչև որ խզումը չ'է ճանչցուած վերջին անգամ ձգուած նաւահանգաւորն մէջ, անմիջապէս չի պիտի ենթարկուին նաւարգեկըին, այլ պիտի շնորհուի անոնց տէրերուն որոշեալ ժամանակամիջոց մը ծախելու համար իրենց ապրանքը, կամ գայնա սրգատօրէն արտածելու, առ այդ օժտուած գրով պաշտպանոչքեան րոյթերով (lettres de sauvegarde):

Կոչական (avocatoire) թուղթերը այն յայտարարութիւններն են որոցմով կառավարութիւնը ետ կը կանչէ իւր հպատակներէն անոնք որք կ'օթևանին թշնամուոյն մօտ: Այս թուղթերը օրինաւոր են երբ Տէրութիւնը ատոնցմով ետ կը կանչէ իւր գործակալները, որովհետև ատոնք իրեն կապուած ըլլալով պարտին իրեն ծառայելու իսկ երբ կ'ուզուի մասնաւորներու, կը վնասեն այն ազատութեանը զոր ամեն անհատ ունի բնակելու ուր որ յարմար գտնի, և այնքան երկար տտեն որքան որ չի վնասէ և ոչ մէկու մը իրաւունքներուն:

Յորդորական (déhortoire) թղթերով կառավարութիւնը կ'արգելու, խիստ պատիժներու սպառնալեօք, բնակելու կամ թշնամուոյն ծառայութեանը մտնելու:



**Վերջապէս արգելական** (inhibitoire) թուղթերը նպատակ ունին արգելելու թշնամիին հետ վաճառականութիւնը և թղթակցութիւնը, հետը պատերազմի բռնուած Տէրութեան ապրանքներուն արտածութիւնը, և այլն:

**Կռիւղ (bataille)**. — Վերջապէս ենթադրենք որ երկու բանակները ճակատ ճակատի ըլլան: Պէտք է նաև ենթադրել որ ատոնք բանակներ են, որովհետև պատերազմը պէտք է ընել մի միայն Տէրութեան կողմանէ իւր ծառայութեանը կոչուած զորագունդերուն միջոցաւ կամ ազատ ընկերութիւններու միջոցաւ ուրոց համախմբուած արտօնուած է կառավարութեանէն, աւագակ կամ ծովահէն նկատուելու պատիժը սպառնալով անոնց որք առանձինն կը մղուին թշնամական զործերու: Բացառութիւն մը կայ մի միայն կոխուած երկրի մը բնակիչներուն 'ի նպատակ, որոց համար պաշտպանութիւնը պարտքերուն ամենէն նուիրականն է:

**Ի՞նչ իրաւունքներ** պիտի տայ կռիւը: Յիշենք որ պատերազմը թշնամոյն ոյժերը անդամարւծելու աւրուեստն է: Օրինական պաշտպանութիւնը կ'արտօնէ սպաննումը զինեալ թշնամիին որ կուգայ կորզել մեզմէ կեանքը: Բայց հոգ կ'աւարտի մահ տալու իրաւունքը: Անիկայ որ իւր թշնամին գերի բռնելէն վերջը չի գթար անոր կեանքին, կը գաղբի զինուոր ըլլալէ, այլ ևս ուրիշ բան չ'է եթէ ոչ մարդասպան մը: Իրաւագիրներ հարցուցած են թէ ներելի է՞ խտիր վարուել գերիներու հետ, առ 'ի վրիժառութեան: Կ'ըսեն որ պատերազմը անգութ հարկեր ունի: Գերիներուն բազմութիւնը կրնայ անկարելի կացուցանել նահանջը (retraite) և ստիպել զօրապետը կամ իւր զօրագունդերուն փրկութիւնը վտանգի ենթարկել և կամ թէ վտանգաւոր բռնէ մը թեթեանալ: Գերիները արձակել չ'է կարող. ատիկայ թըշնամոյն ոյժը աւելցնել է: Այն ատեն զօրապետը սուկալի սրոշում մը կուտայ և Ազգաց — Իրաւունքը պարտի ներել անոր, որովհետև ներելի չ'է վեհանձն ըլլալ 'ի վրաս հայրենեաց:

**Բախիթիլախոսը** (Capitulation) դաշնագիրն է պաշարուած քաղաքի մը որ ինչ ինչ պայմաններով անձնատուր կ'ըլլայ: Ընդհանրապէս այս դաշնագրերը ստիպողական

են, առանց կառավարութենէն վաւերացուելու պէտքը ունենալու:

**Չիւսադարար** (Armistice) գէնքերու դադարն է. կը տարբերի զինադաշին (trêve) ժամանակամիջոցով որոյ համար մին և միւսը կնքուած են, և այն հեղինակութեամբ որմէ կը բղխին: Սպաքէն առաջինը կրնայ կընքուի ընդհանուր զօրապետին, որպէս և զօրագունդի մը պետին կողմանէ, մինչդեռ երկրորդին համար, մանաւանդ երբ երկար ատենուան համարէ, պէտք է, ամենէն ընդհանրապէս, կառավարութեան հաւանութիւնը: Այս վերջին պարագային վէջ, շատ կը նմանի հաշտութեան. այսու հանգերձ հաշտութիւնը բացարձակապէս կը վերջացնէ պատերազմը, մինչդեռ զինագուլին աւարտելուն թշնամութիւնները կրնան վերսկսել: Անհրաժեշտ է թըշնամիին զեկուցանել թշնամութիւններուն վերսկսումը:

**Պատանդը** (otage) խոտման մը գործադրութեանը համար թշնամիին դրուած ապահովութիւն մըն է և կը կայանայ դաշնագրութեան կատարումէն անհատաբար պատասխանելու վիճակեալ մէկ կամ քաղուած անձերուն յանձնումին մէջ: Հին ատենները պատանդները շատ կը գործածուէին: Նոր ազգերը այլ ևս չ'են գիմեր ատոր: Խոտման մը գործադրութիւնը երաշխաւորելու այս եղանակը ըստ ինքեան անբանաւոր է, որովհետև ատկէ օգուտ կը քաղուի մի միայն անիրաւ և բարբարոս լինելով: Պատանդները անմեղ լինելով դաշնագրերու բռնաբարութեանը մէջ, իրենց կեանքն ու ազատութիւնը նուիրական են:

**Սշխարհակալադաշինը** (La Conquête). — Սշխարհակալադաշինը թշնամոյն անշարժ ինչքերուն գրաւումն է: Սշար (butin) կ'ըսեն անկէ առնուած շարժուն ինչքերուն: Յամաքային պատերազմներուն մէջ, յաղթողը ըստ ընդհանուր կարծիքին՝ իրաւունք ունի տէր լինելու պետական ինչքերուն, եկամուտներուն, բերդերուն, Տէրութեան նաւերուն, և այն ամենայնի որ պատերազմի կը ծառայէ: Յարաբերաբար այս տիրութեան, կասկածելի է որ գորութիւնը իրաւունք մը տայ, մանաւանդ երբ թշնամին վնասելու վիճակի մէջ չ'է: Բայց այն որ ստայգ է, սա է որ մասնաւորաց սեփականութիւնները

պէտք է որ յարգուին, և թէ թալլումը (pillage) բնաւ երբէք չ'արդարացուցուիր: Գալով նուաճեալ երկրին գերիխանութիւն գնելու կարծեցեալ իրաւունքին, յաղթողին շահը կը պահանջէ կառավարել չափաւորութեամբ և իմաստութեամբ, խոշընգոտներ չի յարուցանել նուաճեալ ժողովուրդին ճարտարութեանը (industrie) և վաճառականութեանը գէմ, և համեմատել իւր պահանջումները գրաւուած երկրին բանակին պիտոյիցը նպաստելու կարողութեանը. որովհետեւ պատերազմը պէտք է այնպիսի կերպով մը ընել որ հաշտութիւնը հեռացնելու տեղ փութացուի:

Ծովային պատերազմներու մէջ, քանի որ պատերազմի տուրքեր չի կան բեռցներէք բնակիչներուն վրայ, Տէրութեան նաւերը անխտելի իրաւունք ունին բռնելու և տանելու վաճառականական նաւերը և անոնց բեռը որք կը վերաբերին թշնամուոյն խաղաղասէր հպատակներուն, և վայնս դատաւարանել տալ իրր իրաւունքով բռնուած՝ անոնց արժէքը իրենց առնելոյ համար: Ետտերը ատիկայ հակառակ կը նկատեն արդարաւորութեան և բարոյականի. սակայն այս բարբարոս օրէնքը արդարացնելու համար՝ որն որ, ծովուն համար, կը լատեղծէ ճիւղալային իրաւունք մը կողոպտելու անվնաս վաճառականը, կը ըսեն որ այս վերջինը կամաւորապէս ինքզինքը ենթարկած է զլիսուն եկած շարիքնորուն, և թէ քաղաքականութիւնը, որ հիմնուած է ընկերութեան պէտքերուն վրայ, պարտաւորուած է նուիրագործել այս բացառիկ միջոցները, ստով միջոց մը տալու համար յարձակելու ծովային ազգերը իրենց ամենախրելի շահերուն մէջ:

Ծովասպասակորչներ (la Course). — Ծովասպասակութիւնը՝ որ 1856ին Փարիզի Վեհաժողովին կողմանէ ջնջուեցաւ, կը կայանար այն իրաւունքին մէջ զոր կը շնորհէին մասնաւորաց իրենց ծախքովը նաւեր սարքելու, և ՚ի նպաստ իրենց բռնելու այն վաճառականներուն նաւերը որոց կառավարութիւնը հետ կռուի բըւնուած էին: Այս սարքողները, որք ծովասպասակի (corsaire) անունը կը կրէին, պարտաւոր էին ունենալու, հակառակ պարագային իրր ծովահեն (pirate) պատ-

ժուելու պայմանաւ, նշանաբոյրեր (lettres de marque), երաշխաւոր ցուցնել, և խոստանալ չի շեղիլ իրենց սրուելիք հրահանգներէն: Այսպէս ուրեմն ծովասպասակին (corsaire) և ծովահենին (pirate) միջև եղած տարբերութիւնը կը կայանար կառավարութեան կողմանէ արուած արտօնութեանը մէջ: Ծովասպասակը պարտաւոր էր բռնածը տանելու իւր ազգին պատկանող նաւահանգիստ մը, կամ, եթէ շատ հեռուն գտնուեր, չէզոք նաւահանգիստ մը, և սպասել անոր դատաւարտութիւնը. որմէ յետոյ Տէրութիւնը անոր կը թողուր անբող սեփականութիւնը, կամ իրեն կը վերապահեր մէկ մասին տրամադրութիւնը:

Օժանդակները (les Auxiliaires). — Ետտ մը բաներ կրնան մղել ազգ մը պատերազմի մը որոյ պատճառները իրեն անձնական չ'են. օրինակի համար նիդակակցութեան (alliance) կամ դաշնակցութեան (confédération) դաշնագրեր. ստեղծ մինչև իսկ քաղաքականութեան վերաբերեալ պարզ պատճառներ:

Նիդակակցութեան դաշնագրերուն (traité d'alliance) նպատակն է կամ միատեղ պատերազմ ընել ընդգէմ երրորդ տերութիւններու, կամ պարտականութիւն ըստեղծել օդնելու, իրր օժանդակ (auxiliaire), պատերազմողազլխաւոր տերութիւններէն մէկուն:

Գալով նիդակակցութեան առաջ եկած պարտականութիւններուն, եթէ կառավարութիւնները նիդակակից (allié) են միատեղ պատերազմելու համար, պէտք է որ նկատուին իրր թէ կը կազմեն միայն մէկ տերութիւն մը պատերազմի գործողութեանցը և հաշտութեան բանակցութեանցը մասին: Նիդակակից Տէրութիւններէն ան որ խզելով նիդակակցութիւնը թշնամուոյն կը միանայ, այս նենգաւոր ընթացքովը կը գրծէ Առգաց-Իրաւունքին ամեն կանոնները:

Օժանդակը արտօնեալ չ'է առանձինն հաշտութիւն կնքելու: Վերջապէս, քանի որ պատերազմին նպատակը թշնամուոյն ոյժերը անդամալուծել է, կարելի է նկատել իրր նոյն ինքն թշնամին՝ օժանդակները այն Տէրութեան որուն գէմ կը գործուին թշնամութիւնները:

Պնդապաշարունները (Blocus): — Պնդապաշարունները կը կայանան թշնամի հողին ինչ ինչ մասերուն հետ հաղորդակցելու համար դրուած արգելքին մէջ: Չէզոք Տէրութեան նաւերը պիտի կրնան շարունակել իրենց յարաբերութիւնները պընդապաշարուած վայրին հետ: Բայց ինքզինքնին ենթարկելով ամեն հետեանքներուն ասկէ առաջ գալիք վնասներուն և վտանգներուն մասին:

Չեզոքները (les Neutres). — Օժանդակներուն հակառակն են չեզոքները. Չեզոքութիւնը (Neutralité) վիճակն է կառավարութեան մը որ չուզեր մասնակցիլ օտար պատերազմի մը, և որն որ, մինչդեռ երկու կամ շատ մը Տէրութիւններ կը պատերազմին, քաջուած կը մնայ անտարբեր ձեռնպահութեան մը մէջ: Ատի կրնայ առաջ գալ դաշնագրերէ, և երբեմն ալ, առ ի շոյէ դաշնագրերու, քաղաքական նկատողութիւններէ և շահերէ: Չէզոքութենէն առաջ եկած պարտականութիւնները կը վերածուին երկու ընդհանուր ըսկզբունքի. պատերազմողներու կողմէ՝ յարգանք չէզոքներուն իրաւունքին. չէզոքներու կողմէ՝ կատարեալ ձեռնպահութիւն, բացարձակ անկողմնակալութիւն: Բայց դաշնագրերը յանձնուս կրնան փոխել տալ այս պարտականութիւններուն ընդարձակութիւնը: Եթէ ասոնք կատարուին երկուստեք, չէզոք Տէրութիւնը պէտք է որ նկատուի իբր բարեկամ պատերազմողներու կողմանէ: Այդպէս է ահա որ այս վերջինները պարտին յարգել չէզոքներուն հողը, ինչքը, անձը, որք պարտաւորեալ են, իրենց կարգին, եւ քաջուիլ մասնակցելէ, և ոչ մի կերպով, զինուորական զործողութիւններուն և պարտին և ոչ մի առաւելութիւն տալ թշնամիներէն միոյն ի վնաս միւսոյն: Այս կանոնին անաստելը թերանալ ըսել է չէզոքութեան պայմաններուն, եւ, հետեաբար, կորսնցնել անոր առաւելութիւններուն կոչումն ընելու իրաւունքը: Բայց բոլոր այս պատուէրները կը վերաբերին մի միայն կառավարութիւններուն, և ոչ անհատից: Չէզոք Տէրութեան մը պատկանող մասնաւորները պարտին պահել, հակառակ իրենց երկրին կառավարութեանը չէզոքութեանը, պատերազմին մասնակցելու ա-

պատութիւնը, մատուցանելով երկու հակառակորդներէն միոյն կամ իրենց սուրին և կամ թէ իրենց հարստութեանը օգնութիւնը, ինչ որ ալ ըլլայ կառավարութեան մը զօրութիւնը, իւր իշխանութիւնը կը կենայ մասնաւորաց անհատական ազատութեան առջև, երբ այս ազատութիւնը չի խանգարեր ընկերային կարգու սարքը: Ուրեմն անիրաւ է որ, կըսեն, քանի մը իրաւագիրներ չէզոք Տէրութեանց կառավարութիւններուն կուտան թշնամուոյն հետ վաճառականութիւն և ամեն յարաբերութիւն ընելն արգիլելու իրաւունքը: Պատերազմի մէջ ձեռնպահութեան դերը կը վերաբերի մի միայն չէզոք կառավարութիւններուն, բայց չի կրնար տարածուիլ նաև անհատներուն:

Չէզոք վաճառականութեան անկախութիւնը անվիճելի է, բայց ասի ենթարկուած է սա պայմանին որ չէզոքութեան կանոնները չի պիտի ըռնաբարուին. Չէզոքները պարտին ուրեմն ետ քաջուիլ պատերազմողներուն հետ ընելու պատերազմի մարսանեկոչքեան (contrebande de guerre) վաճառականութիւնը: Այս անունը կը տրուի ինչ ինչ ապրանքներու որք վիճակեալ են ծառայելու ուղղակի պատերազմին, որպէս զէնքերը, վառօդը, գնդակները, ձիերը, և այլն, և այլն: Այս անուամբ կ'իմացուի նաև զինուորներուն փոխազրութիւնը:

Թշնամիին պատերազմի մարսանեկոչքիւնը հետապընդելու համար ունեցած իրաւունքը կ'արդարացնէ դայն որ քննութիւն (visite) կը կոչուի: Բայց պէտք չ'է շփոթել քննութեան (visite) իրաւունքը դրօշի քննութեան հետ (enquête du pavillon): Վիզիթի իրաւունքը ի գործ կը դրուի միայն պատերազմի ժամանակ, վաճառականական չէզոք նաւերու վրայ՝ ստուգելու համար թէ բեռնաւորեալ են կամ ոչ պատերազմի մարսանեկոչքեանը: Գալով enquête du pavillon իրաւունքին, ատի ծովերու վրայ ոստիկանութեան կիրառումն է: Նպատակն է բաց ծովուն վրայ՝ հանդիպուած վաճառականական նաւերուն հպատակութիւնը հասկնալ, եւ արգելուլ ծովահէնութիւնը՝ ամեն վաճառականական նաւերէ հարկադրելով պարգելու ազգային դրօշ մը, և արդարացնել տալով որ այդ դրօշին տակը չի կայ ո՛ր և է խարդախութիւն կամ յափշտակութիւն:

Վերանաստատութիւն խաղաղութեան (Rétablissement de la paix). — Հաշտութեան դաշնագրեր (Les traités de paix). — Հաշտութեան դաշնագրերը պայմանագրութիւններ են որոցմով երկու կամ շատ մը Տէրութիւններ կը յայտարարեն հանդիսաւոր կերպով մը՝ իրենց մէջ թշնամութիւններուն վերջացած ըլլալը, առանց որ մին կամ մէկ քանինները ենթարկուին միւսոյն բացարձակ անկախութեանը:

Հաշտութեան բանակցութեանը համար անհրաժեշտ ձևեր չի կան: Կառավարութիւնները ազատ են բանակցելու ուղղակի և թղթակցութեամբ: Սակայն, սոհաւորակ, կը համաձայնին ինքզինքնին ներկայացնել տալու պատուիրակներու միջոցաւ որք կը ժողովին, և, օժտուած գոյով լիակատար իշխանութեամբ, արտօնեալ են առաջարկութիւններ ընելու, վիճարանելու խնդրու շահերուն վրայ, և տալու իրենց հաւանութիւնը: Բայց միայն պատերազմող կառավարութիւններուն ներկայացուցիչները չեն որ կը մասնակցին այդ ժողովին. եւրօպական հաւասարակշռութեան դրութիւնը չի թողարտեր թշնամի տէրութեանց որ մեկուսանան Եւրոպիոյ միւս Տէրութիւններէն, ստորագրելու համար իրենց հաշտութեան դաշնագրերը: Չէզոք կառավարութիւնները որ շահեր ունին այդ վեհաժողովներուն ենթարկուած խնդիրներուն լուծմանը մէջ, ազատ են լիազօրներու զրկելու: Սմեն ազգերու ներկայացուցիչներուն այս ընդհանուր ժողովներուն ազգեցութիւնը ահագին է ժողովրդոց մերձեցմանը համար: Այս վեհաժողովները՝ որք Միջազգային Իրաւագիտութեանը տեսակ մը ճշմարիտ ընտանեկան ժողովները կը սեպուին՝ հազուադէպ է որ այս ժողովները, ուր ամենէն քիչ յառաջացեալ Տէրութիւններն իսկ կ'ընտանենան անոնց հետ որք քաղաքակրթութեան շահը կը կրեն, չի յանգին յառաջագիտութեան մը:

Երբ լիազօրները գումարուին, ինքզինքնին նախ կը գտնեն շատ մը նախնական խնդիրներու առաջին: Առաջինները կը վերաբերին նիստերուն ժամանակին եւ ուղղութեանը. կառավարութիւններն են որ կ'ընտրեն վեհաժողովին գումարման վայրը: Առաջինը, շափազանցեալ գիւրազգայութեան զգացմամբ մը, պատերազ-

մոյները՝ չ'էին ուզեր բանակցիլ թշնամի հողին վրայ. Այսօրուան օրս այս գիւրազգայութիւնը այլ եւս գոյութիւն չ'ունի. նախնական խնդիր մը, որ միշտ կը ներկայանայ, իշխանութիւններու ստուգման խնդիրն է: Գալով աստեղագիտութեան խնդրոյն՝ վայել է տալ վեհաճարտութիւնները վարելու պատիւը լիազօրին այն Պետութեան որոյ հիւրերն են վեհաժողովին անդամները:

Լիազօրաց անբունարարելութիւնը գրուած է Միջազգային Իրաւունքին պաշտպանութեանը ներքև:

Նախնական աշխատութիւններէն վերջը վեհաժողովը կը խորհրդակցի հաշտութեան մասին իրեն եղած առաջարկութիւններուն վրայ: Սմենէն մեծ անկախութիւն մը պարտի տիրել այս խորհրդակցութիւններուն մէջ, և պետութիւնը որ կ'ընդունի լիազօրները իւր հողին վրայ պարտի ետ քաշուիլ ամենայնէ որ կրնայ վնաս հասցընել այս ազատութեան: Հարկաւ ծանր խնդիրներ են անոնք որք կը բանակցուին վեհաժողովներուն մէջ, առանք վերաբերութիւն ունին խաղաղասէր յարաբերութեանց վերահաստատմանը, գերիններուն փոխանակութեանը, սահմանագծին որոշմանը, պատերազմին շարեացը հատուցմանը, աշխարհակալութիւններու կարգադրութեանը, զորագունդերու նահանջին, ժամանակի պայմաններուն՝ ընդունուած դաշինքներուն վաւերագործմանը և գործադրութեանը համար:

Հաշտութեան դաշնագրերուն երկրորդ մէկ արդիւնքն ալ վերջնական կացուցանելն է այն իրաւունքները որք միայն առժամանակեայ կերպով պատերազմի միջոցին կը վերաբերուէին յաղթողին: Վերջապէս, այս դաշնագրերը իրերը միշտ կը թողուն այն վիճակին մէջ ուր կը գտնուին, ուրիշ բան է եթէ ըլլայ հակառակ բացայայտ պայման մը: Եղծիչ պայմանի (condition résolutoire) սկզբունքին գործադրութեամբը, որ գոյութիւն ունի պատերազմին տևողութեանը միջոցին և որ կը դադրի միայն հաշտութեան ատեն, յաղթողը չի կրնար թողուլ երրորդ ի մը՝ վերջնական կերպով՝ նշուածեալ հողը, և սեփականութեան այս փոխանցումը վաւերական և կատարեալ կ'ըլլայ միայն եթէ նուաճեալ հողը յաղթողին թողուած է դաշնագրով:

Այն սկզբունքը որ պարտի տիրապետել ազգերու միջև եղած յարաբերութիւններուն: Բնական Իրաւագիտութիւնը և Բարոյագիտութիւնը, զորձագրուած ազգերու միջև եղած յարաբերութիւններուն, ուրիշ հիման վրայ չ'են կենար եթէ ոչ անհատից միջև եղած յարաբերութիւններուն զորձագրուած բնական Իրաւագիտութեան և Բարոյագիտութեան վրայ: Ամէն մարդ, մասնաւորապէս, հանգստաւէտութեան հետամուտ է: Մարդկան հաւաքումներն ալ ատոր հետամուտ են, եւ իրենց ընդհանուր ձգտումը այնու համար աւելի զորուոր է որովհետեւ կ'ընդգրկէ անհատական սմեն ձըգտումները: Այն ամեն մարդ որ ականջ կը գնէ իւր աղէկ հասկցուած շահուն՝ ետ կը քաշուի վնասելէ նըմանեացը, վախնալով որ ասոնք անոր գէժ շի դարձնեն իրենց ոյժերը. կ'ընկերակցի, ընդ հակառակը, անոնց աւելի ապահովապէս ընդհանուր նպատակին հասնելու համար: Նոյնպէս, ազգերու աղէկ հասկցուած շահը շի կայանար զիրար կործանելուն մէջ, այլ փոխանակելուն մէջ իրենց արտադրութիւնները և իրարու հազորդելուն մէջ իրենց լոյսերը: Վերջապէս, ընդհանուր ըսկըզրունքները ազատութեան, հաւասարութեան, եղբայրսիրութեան, սեփականութեան և հանրային կարգապահութեան, ընդունակ են զորձագրուելու միջազային յարաբերութիւններուն:

## Վ Ե Ր Զ

Երրորդ Մասին

և

Միջազգային Իրաւագիտութեան:

Ա. Որո՞նք են Միջազգային իրաւագիտութեան  
ենթարկուած նիւթերը . . . . .

Ազգերը . . . . .

Ազգք. Ազգութիւն. Տէրութիւնք. Գերիշխանութիւն (souveraineté). Պէ-  
տութեանց իսկոչքեանը (identité) վերաբերութիւն ունեցող խնդիրներ .  
Պետութեանց գոյութեան եղանակը .

**Բ. Ազգաց իրաւունքներ**

Բացարձակ

կամ

Պայմանադրական

1.

Ինքնապահպանութեան իրաւ-  
ունք .  
Օրինաւոր ինքնապաշտպանու-  
թիւն .  
Միջամտութիւն .

2.

Անկախութեան իրաւունք .  
Ըստ ներքին կառավարու-  
թեան .  
Շարունակութիւն միջամտու-  
թեան խնդրոյն .  
Իրաւունք քաղաքային և ու-  
ճրային օրէնադրութեան .

3.

Հաւասարութեան իրաւունք .  
Մեծարանք .  
Պատուանունք .  
Նախաթողութիւն (présen-  
ce) .

4.

Սեփականութեան իրաւունք .  
Զանազան տեսակ ըստաց-  
ուացքներ .  
Աշխարհակալութիւն .  
Խնդիր ծովերու Սեփականու-  
թեան .  
Լերինք, գետք, անցք, նաւար-  
կութիւն .

Դաշնադրութիւններու  
Վերաբերեալ խնդիրներ .

**Գ. Ազգերուն իրարու մէջ եղած յարաբերութիւնները .**

Խաղաղութեան ատեն

Պատերազմի ատեն

Դեսպանութեան իրաւունք .  
Դիւանագիտութիւն .  
Դեսպանք .

Ազգաց մասնաւոր իրաւունք .

Ի մէջ և ընդ պատերազմոյներու .

Ի մէջ և ընդ չեզոքաց .

**Դ. Վերանստատոյցի խաղաղութեան .**

Նախաշաւիղ (Préliminaires) , Վեհաժողով (Congrès) , Դեսպանախորհուրդ (Conférence) .



